

Գործ՝ Քրիստ Հովուեանի  
«ստեր» քեմայով  
շահել է Մարտոսիբայի եր իծանկարի միջազ ային  
փառատօնի լիստոր մրցանակը



## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2**     **Համայնքի լուրեր**
- 8**     **Հայաստան՝ ամառային ընդմիջում**  
Գայիանէ Աբրահամեան
- 10**    **Ֆորում**  
Կոլիա Տէր Յովհաննիսեան
- 13**    **Քրիստ Շովուեանը շահել է Մարութիբայի**  
**երգիծանկարի փառատօնի մրցանակը**
- 16**    **Հարցազրոյց Անդրանիկ Խեչումեանի հետ**  
Շաքէ Պետրոսեան
- 19**    **Հայերէնի ուղղագրութեան ստուգման ծրագիր**
- 20**    **Էջեր Ռոբերտ Պետրոսեանի օրագրից**  
Ռոբերտ Ասրեան
- 23**    **Մայքըլ Զաքսոնի մահը**
- 24**    **Հրաշագործ մեղուները**
- 26**    **Ընթերցանութեան դժարին ուղին**
- 28**    **Նորայր Սիսակեան՝ տիեզերական**  
**կենսաբանութեան հիմնադիր**
- 30**    **Մարզանք**
- 34**    **Ժամանց**

### ԳԼՆԱԿԻՈՐ ՆԻԺ

- 4**     **Ընտրութիւններից յետոյ**
- 6**     **«Ազդակ»-ի լրատուութիւնը Իրանի դէպքերի**  
**մասին**

### Յոյս

Հասարակական-մշակութային  
երկշաբաթերը

Արտօճատէր՝  
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝  
Ռոբերթ Սաֆարեան

### Խմբագրական կազմ՝

Քարմէն Ազարեան,  
Լիա Խաչիկեան,  
Անդրանիկ Խեչումեան,  
Գարուն Սարգսեան,  
Անդրանիկ Սիմոնեան,  
Կոլիա Տէր Յովհաննիսեան,  
Վանէ Տէր Պետրոսեան

Գեղարեստական ձեւաւորում՝  
Լիա Խաչիկեան

Սրբագրիչ՝  
Քարմէն Ազարեան

Գովազդ՝  
Ա. Ազարեան

Հասցէ՝  
Թեհրան, Էնդելաբ պողոտայ,  
Վալի Ասր քառուղի  
համար 1048

Հեռախօս՝  
66495180  
66492693

Հեռախօս-հեռապատճէմ՝  
66495208

Էլեկտրոնային փոստ՝  
hoosy@inbox.com

## ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

2009 թվականի մայսի 28-ից 30-ը Իրան-Հայաստան Բարեկամության միության վարչության անդամները այցելելով Հայաստանի հանրապետության քաղաքամայր Երեւան, բազմաթիւ հանդիպումներ ունեցան՝ հայ-իրանական առնչութիւններում դեր ունեցող նախարարութիւններում նախարարի կամ փոխ-նախարարի մակարդակով: Խմբի անդամները ջերմ ու հայրական ընդունելութեան արժանացան Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.հայրապետի մօտ.:

Խումբը գլխավորում էր Իրանահայ գործարար, ազգային բարերար Լեւոն Ահարոնեանը: Խմբին անդամակցում էին դոկտ. Անդրանիկ Սիմոնեանը, դոկտ.Միր Ղասեմ Մոլըմենիւն, Պրն. Հենրիկ Խալոյեանը, Պրն. Ֆարիադ Հաջի Փարսանէն: Խմբին ուղեկցում էր Իրանի մշակոյթի եւ Իսլամական առաջնորդութեան նախարարութեան կազմում աշխատող ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնների բաժնի պատասխանատու պրն. Սաըիդ Թաղալին:

Բազմաթեղուն ու բովանդակա-



լից էին խմբի այցելութիւնները, որոնք սկսեցին Երեւանի Պետական համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի դեկան, Պրոֆեսոր Գուրգէն Մելիքեանի ու նրա գործընկերների եւ ուսանողների հետ հանդիպումից եւ աւարտեցին Իրանի Իսլամական հանրապետութեան դեսպանութեան մշակութային կցորդ պրն. Շաքիբայի մօտ կազմակերպած մամլոյ ասուլիսով:

Բոլոր հանդիպումները կազմա-

կերպել էին Իրանում յայտնի Հայաստանի հանրապետութեան նոր արտակարգ եւ լիազոր դեսպան պրն. Գրիգոր Առաքելեանի միջոցով եւ վայելում էին նրա ջերմ հովանաւորութիւնն ու մասնակցութիւնը: Բոլոր հանդիպումներին ներկայ էր եւ խմբին ուղեկցում էր ՀՀ ԱԳՆ Իրանի բաժնի աշխատող օրիորդ Սիւզանա Նաւասարդեանը: Այդ մասին մեր յաջորդ համարում կը ներկայացնենք նկարագարդ աւելի ծաւալուն հիւթ:

## Ի Ա Մ Մ - Ի Պ Ա Տ Գ Ա Մ Ա Ի Ո Ր Ա Վ

Երեքշաբթի, Յունիսի 23-ի երեկոյան ժամը 8-ին Իրանահայ ազգային եւ մշակութային միութեան կենտրոնատեղիում բացւեց տարեկան ընդհանուր ժողով: Այդ ժողովը իւրաքանչիւր չորս տարին մէկ անգամ ընտրում է միութեան Պատգամաւորական խորհրդի կազմը: Ժողովին սկզբից մինչեւ աւարտ մաս-



նակցում էր նգ նախարարութեան ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնների պատասխանատու տիկին Անդուհգինը:

Ժողովի բացւելուց յետոյ օրւայ դիւանի նախագահ ընտրւեց դոկտ. Այիդա Քարիմ Մասիհին, իսկ քարտուղարներ՝ տիկին Անէտ Աբգարեանը եւ օրիորդ Անիտա Վարդանեանը: Նախ միութեան նախագահի յայտարարութեամբ եւ աւագ անդամների ձեռքով անդամութեան տոմս շնորհւեց միու-

թեան 7 նոր անդամներին: Յետոյ ընդհանուր ժողովն ունկնդրեց միութեան վարչութեան, պատգամաւորական խորհրդի եւ քննիչ մարմնի զեկուցումները: Վարչութեան եւ Պտգ.խորհրդի գործունէութիւնը գնահատւեց գերազանց: Բուռն եւ տեւական քննարկումներ եւ մտքերի փոխանակում տեղի ունեցաւ, որից յետոյ առաջադրւեցին չորս հոգու անունները քննիչ մարմնի եւ 40 հոգու թեկնածութիւնը պատգամաւորական

# ՌՈՔԵՐԹ ՍԱՖԱՐԵԱՆԻ «ԹԵՂՐԱՆԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ» ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԸ «ՈՍԿԷ ԾԻՐԱՆ» ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Յուլիսի 12-19-ին Երեւանում կայանալու է «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի 6-րդ շրջանը: Այս փառատոնում ցուցադրելու են 110 ֆիլմ 40 երկրներից: Փառատոնն ունի միջազգային խաղարկային եւ վաւերագրական ֆիլմերի բաժին, ինչպէս նաեւ «Հայկական Համայնապատկեր» կոչւող մի առանձին մաս, ուր մրցում են աշխարհի զանազան երկրներում աշխատող հայ կինոգործիչների ֆիլմերը: Այս տարւայ «Հայկական համայնապատկեր»-ում ցուցադրելու է վաւերագրական ֆիլմերի իրանահայ ռեժիսոր Ռոբերթ Սաֆարեանի «Թեհրանը Լուսանկարներում» գործը: «Թեհրանը Լուսանկարներում» ֆիլմում, ինչպէս արդէն յայտնի է դրա անունից, ներկայացւում է զանազան ժամանակաշրջաններում Իրանի մայրաքաղաքի պատկերը Լուսանկարներում: Այդ պատկերը որոշւում է ոչ միայն ինքը քաղաքի կերպարանափոխմամբ ու ֆիզիկական զարգացմամբ, այլ նաեւ Լուսանկարչական տեխնոլոգիայի զարգացումով եւ Լուսանկարչական մտքի պատմութեամբ: Թեհրանի Լուսանկարների ցուցադրման զուգահեռ, լսւում է ֆիլմի պատմիչի մտորումները Լուսանկարչութեան հմայքի գաղտնիքների մասին: Սաֆարեանը «Թեհրանը Լուսանկարներում» ֆիլմից բացի, նկարել է մի շարք ուրիշ վաւերագրական ֆիլմեր, որոնցից կարելի է յիշել «Ինւերցիա»-ն (*վարունեզի*)՝ Թեհրանի օդի աղտոտութեան մասին, եւ «Ջոֆֆ շիշ»-ը Իրանական սինեմայի անւանի ռեժիսոր Մասուդ Քիմիայիի մասին:



## ԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

խորհրդի անդամութեան համար: Քւէարկութեան արդիւնքում Իրանահայ ազգային եւ մշակութային միութեան պատգամաւորական խորհրդի անդամ ընտրւեցին յետեւեալ անձինք: Այս կազմն է ձեւաւորելու նաեւ միութեան յաջորդ վարչութիւնը:

Պատգամաւորական խորհրդի կազմը՝

- 1- Մարիէտա Աղաբէգեան
- 2- Սերժիկ Սիմոնեան
- 3- Վահան Սամէլեան
- 4-Հրաչ Միրզախանեան

- 5- Փաթրիս Սիմոնեան
- 6- Ալէն Ամրանեան
- 7- Արշակ Աղամեան
- 8- Արմաւիր Մարգարեան
- 9- Ռուբիկ Տէր Յովհաննիսեան
- 10- Փիւնիկ Սիմոնեան
- 11- Ներսիկ Ալահւերդեան
- 12- Անդրանիկ Սիմոնեան
- 13- Ժենիկ Նազարեան
- 14- Հրանտ մկրտումեան
- 15- Ռաֆիկ Զաքիվանդ
- 16- Ասողիկ Բաբայեան
- 17- Ժանէտ Նազարեան
- 18- Էմմա Սամէլեան

- 19- Սեդա Սուքիասեան
- 20- Բերսաբէ Վարդանեան
- 21- Բաբկէն Նազարեան
- 22- Մեղեդի Յարութիւնեան
- 23- Սմբատ Աբգարեան
- 24- Արմենուհի Սիմոնեան
- 25- Էլլին Շիրանեան

Քննիչ մարմնի անդամներ ընտրւեցին՝ Ալֆրէդ Անթանէսեանը, Զանի Սիմոնեանը, Վահիկ Պետրոսեանը, իսկ անձնափոխանորդ՝ Մերջիկ Նալբանդեանը: Ժողովն աւարտւեց Լուսաբացի ժամ 3:45-ին:

# ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒՔԻՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

Յունիսի 12-ի (հոբոդդի 22-ի) նախագահական ընտրութիւններից յետոյ երկրի քաղաքական իրադարձութիւնները զարգացել են գլխապտոյտ առա-

պէս «ընտրական քողեթա»:

Ընտրութիւններից մի շաբաթ անց, ուրբաթօրեայ հասարակաց աղօթքի ժամանակ, յեղափոխութեան



Յեղափոխութեան առաջնորդ Այաթ. Խամենէին պահանջում է վերջ տալ փողոցային ցոյցերին



Ընտրութիւնների արդիւնքներին բողոքող ժողովրդը՝ Ազատութեան հրապարակում

ջացնող արագութեամբ ու աննախընթաց թափով: Ընտրութիւններին հետեւող երկու շաբաթներում, Թեհրանի փողոցները ականատես են եղել ժողովրդական ցոյցերի եւ փողոցային բախումների, որոնց արդիւնքում սպանւել են տասնեակ մարդիկ (ինչպէս բնական է այսպիսի պայմաններում զոհերի ստոյգ թիւը յայտնի չէ), եւ ձերբակալւել 500-ից ատելի քաղաքական գործիչներ ու լրագրողներ: Այս բոլորը հետեւանքն են Ուրբաթ հոբոդդի 22-ի ընտրութիւնների արդիւնքների: Պաշտօնական տւեալների համաձայն, երկրի նախագահ է ընտրւել Մահմուդ Ահմադինեժադը՝ ձեռք բերելով 24 միլիոն ձայն: Սակայն միւս թեկնածուները հաւատացած են, որ ընտրութիւնները կեղծւել են եւ նրանցից Միր Յոսէյն Մուսաւին ամենայն վստահութեամբ յայտարարել է, որ իրեն են քւէարկել ժողովրդի մեծամասնութիւնը: Հակառակորդները նոյնիսկ ընտրութիւնների մասին խօսել են որ-

առաջնորդ Այաթուլլահ Խամենէին հաստատեց ընտրութիւնների արդիւնքը եւ կոչ արեց վերջ տալ ցոյցերին: Նա ասաց, որ եթէ գոյութիւն ունեն գանգատներ, թող դրանք հետեւեն օրինական ճանապարհներով: Նա հաստատելով թեկնածուների միջեւ հեռուստատեսային բանավեճերը, միաժամանակ քննադատեց թոյլ տուած ծայրայեղութիւնները եւ գնահատելով Հաշեմի Ռաֆսանջանի յեղափոխութեանը մատուցած մեծ ծառայութիւնները, անհիմն համարեց ընտրութիւններում նրան ուղղւած մեղադրանքները: Նա ատելացրեց, որ ցոյցերի շարունակումից սպասուող հաւանական արհւնայեղութեան պատասխանատուն թեկնածուներն են լինելու:

Յամենայն դէպս, յաջորդ օրը, ընտրութիւնների արդիւնքին բողոքող բազմութիւնը դարձեալ փողոց դուրս եկաւ եւ այս անգամ դժբախտաբար զոհեցին ատելի մեծ թւով մարդիկ, քանի որ իրաւապահ ուժե-

րը, վերաբերում էին աւելի խիստ, քան նախկին օրերը:

Ձերբակալածների շարքին են բարեփոխական խմբակցութիւնների մի շարք աչքառու դէմքեր, ինչպիսիք են Սաիդ Յաջարեանը, Բեհզադ Նաբաւին եւ Մոսթաֆա Թաջզադէն, ու անւանի լրագրողներ, ինչպէս Սաիդ Լէյլաջը, Ահմադ Ձէյդաբադին եւ Մոհամմադ Ղուչանին: Խօսւում է այն մասին, որ ձերբակալածներից ոմանք ճնշման տակ են, որպէսզի խոստովանեն, որ նպատակ են ունեցել երկրում իրականացնել թաւշէ կամ գունաւոր յեղափոխութիւն, յատկապէս, որ Մուսաւիի համակիրները կանաչ գոյնը դարձրել են իրենց նշանը եւ ցոյցերում ու նախընտրական հանրահաւաքներում կրում են կանաչ փուչիկներ, կամ ձեռքներին կապում կանաչագոյն ժապաւէններ:

Այժմ ցոյցերը մասամբ դադարել են, եւ ներքին գործերի նախարարութիւնը ոչ մի գնով զոհաւորների յիշատակին ցոյցեր կազմակերպելու արտօնութիւն չի տալիս եւ դա այն դէպքում, երբ Մուսաւիի եւ Քառուբին անգամներ դիմել են այդ նախարարութեանը՝ հանրահաւաքների իրաւունք ստանալու համար:

Յիշատակելի է, որ դժգոհ թեկնածուները անընդհատ իրենց համակիրներին հրաւիրում են խուսափել բռնի ակտերից եւ ցուցարարները ընդհանուր առմամբ այդպէս էլ անում են: Ցոյցերի ընթացքում նրանք յաճախ քայլում են լուռ, առանց լրզուկներ բացականչելու:

Ըստ օրէնքի, «սահմանադրական օրէնքի պահպանների խորհուրդ» կոչւած մարմինը այժմ քննարկում է ընտրութիւններին բողոքող թեկնածուների գանգատները եւ դրա համար, յեղափոխութեան առաջնորդից հինգ օր յաւելեալ ժամանակ է խնդրել: Յայտարարել է նաեւ, որ 50 քաղաքներում ձայների քանակը աւելին է, քան տեղի քւէարկման իրաւունք ունեցող բնակչութեան թիւը: Այդ քաղաքների ընդհանուր բնակչութիւնը երեք միլիոն է:

Այս օրերին երկրի ռադիոհեռուստատեսութիւնը խիստ քննադատում է այն բանի համար, որ միակողմանի է արտացոլում երկրի քաղաքական անցուդարձը, եւ դա ոչ միայն դժգոհ թեկնածուների, այլ նաեւ պահպանողական թեւի այնպիսի պատկառելի դէմքերի կողմից, ինչպիսիք են խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին եւ խորհրդարանի նախագահի տեղակալ Մոհամադ-Ռեզա Բահոնարը: Իսկ Թեհրանի քաղաքապետ Մոհամմադ Բադեր Ղալիբաֆը, որ սպասւում էր նախագահութեան թեկնածուներից մէկը լինել, ասել է, որ պիտի լսել դժգոհ ժողովրդի ձայնը:

Այս դէպքերը դատապարտւել են ԱՄՆ-ի ու եւ-

րոպական երկրների կողմից: Յետեւաբար խզւել են Իրանի յարաբերութիւնները արեւմտեան երկրների եւ յատկապէս Անգլիայի հետ: Այդ իսկ պատճառով, որոշ թերթերում, անցեալ երկու շաբաթների դժգոհութեան բոլոր արտայայտութիւնները վերագրւում են օտար ուժերի դաւադրութեանը, իսկ բողոքողները համարւում՝ օտարների ձեռքի խաղալիք: Սակայն հնչում է նաեւ այն տրամաբանական ձայնը, որը պահանջում է լսել բողոքի ձայնը:



Միր-Յոսէյն Մուսաւիին հաւատացած է, որ ժողովրդի մեծամասնութիւնը քւէարկել է իրեն



Խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին ասում է, որ հեռուստատեսութիւնը պիտի արտացոլի ընտրութիւնների արդիւնքներից դժգոհ ժողովրդի ձայնը

# Բեյրութի «Ազդակ» թերթի տեղեկատվությունը Իրանի դեպքերի եւ իրանահայ համայնքի վիճակի մասին, հիմնված «Ալիք»-ի խմբագրի հետ զրոյցի եւ Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանի խօսքերին

## «Ալիք»-ի խմբագիր՝ Դերենիկ Մելիքեան ԻՐԱՆԱԿԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԸ ԴԱՅԷ ԴՐԱԿԱՆ ԶԷՉՈՔՈՒԹԻՒՆ

*Անդրադառնալով Թեհրանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն՝ Իրանի մեր պաշտօնակից «Ալիք»-ի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանը հետեւեալը հաղորդեց «Ազդակ»-ին՝ (Երկուշաբթի օրուան թիւով լոյս տեսած է այս հաղորդումը - «Ասպարէզ») իրեն հետ ունեցած հեռախօսային զրոյցին ընթացքին.*

1- Ինչպէս վերջին 30-ամեայ ներքաղաքական-հասարակական կեանքի անկիւնադարձային պահերում, իրանահայութիւնը մէկ անգամ եւս մասնակից եղաւ վերջին խոշոր իրադարձութեանը՝ Իրանի 10 ընդհանրապահական ընտրութիւններին եւ ժողովրդի ու պետութեան համընդհանուր շահերից ելնելով՝ կողմնորոշեց յօգուտ այն թեկնածուի, որն իր ծրագրային դրոյթներով աւելիով էր համահունչ նաեւ իրանահայ համայնքի ազգային-քաղաքական, հասարակական ու համայնքային նպատակներին:

2-Վերջին օրերի, յատկապէս ընտրութեանց արդիւնքների իրապարակելուց յետոյ, ժողովրդային խաղաղ ցոյցերի ընթացքում որոշ մութ ուժեր չարաշահելով տիրող մթնոլորտը՝ փորձել են վարկաբեկել այդ ցոյցերը, ուստի շինծու բախումները դարձել են անխուսափելի՝ դրանից բխող բոլոր անցանկալի հետեւանքներով:

Չետեալար՝ տուժել են անմեղ ցուցարարներ, յարձակման են ենթարկւել համալսարանականներ, ուսանողներ, ձերբակալւել են քաղաքական գործիչներ եւ լրագրողներ:

3- Իրանահայ համայնքը, ինչպէս միշտ, մնան իրադարձութիւններում պահելով իր դիտորդի եւ դրական չէզոքութեան կարգավի-

թեամբ ու վերահսկողութեամբ: Չենց վերջիններիս արագ ու անմիջական վերահսկողութեան շնորհիւ, ցոյցերից մէկի ընթացքում ձերբակալւած թեհրանահայ մի երիտասարդ 2 օր անց ազատ է կացուցւել, իսկ Սպահանում (Նոր Ջուղա) պատահական խժոժութեան արդիւնքում, թեթեւակի նիւթական վնաս է կրել հայապատ-



ճակը՝ խուսափել է ուղղակի նիւթական թէ բարոյական վնասներ կրելուց՝ պահելով իր սպասողական, բայց զգօն դիրքը՝ ինչպէս ազգային իշխանութիւնների, այնպէս էլ խորհրդարանի իր զոյգ պատգամաւորների գլխաւորու-

կան մի բնակարան:

4- Այժմ երկրում սպասողական-հանդարտ մթնոլորտ է, առօրեայ կեանքն ընթանում է բնականոն հունով եւ ընդհանուր ջանք է գործադրւում՝ հաւանական ցրնցումներից խուսափելու համար:

5- Հայկական հիմնարկները, առևտրական կենտրոններն ու խանութները աշխատում են բնականոն եղանակով եւ իրանահայ համայնքի անդամները, ինչպէս իրանական ողջ ժողովուրդը, յուսադրած են կայուն, ներքաղաքական ցնցումներից զերծ հասարակագի առաջընթացով:

Իրանահայութեան վիճակին մասին «Արմէնփրէս»-ին տեղեկութիւն փոխանցած է նաեւ Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանը:

Սրբազանը նշած է, որ հայ համայնքի ներկայացուցիչները չեն մասնակցած յետընտրական զար-

գացումներուն եւ վիրաւորածներուն կամ ձերբակալածներուն մէջ հայազգիներ չկան: Միայն շաբաթ մը առաջ սխալմամբ ձերբակալած է հայ երիտասարդ մը, որ արդէն հայ պատգամաւորին ջանքերուն շնորհիւ, ազատ արձակած է:

«Այսօր կոչ ենք ուղղել մեր համայնքին՝ վերջին օրերին քաղաքում տիրող անցուդարձի ու դէպքերի առնչութեամբ, տեղեկացնելով, որ Թեհրանի հայոց թեմական խրիւրդը մօտիկից հետեւում է դէպքերի զարգացմանը՝ միշտ պաշտպան մնալով օրէնքի գերակայութեան անհրաժեշտութեանը եւ երկրի անբողջականութիւնը

պահպանելու կարեւորութեանը: Թեհրանահայ համայնքին յորդորում ենք մնալ խաղաղ, գործել որպէս օրինապահ քաղաքացիներ, իրացնել քաղաքացիական իրաւունքներն ու պարտականութիւնները», նշած է սրբազանը՝ աւելցնելով, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը եւս զգոնութեան կոչ ուղղած է հայ համայնքին:

Աղբիւր՝ «Ասպարէզ» համացանցային կայք

## ՀԱՅԱՏՅԱՆԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅՆ ԶԿԱՅԱՅԱԼ ԹԵՂՐԱՆՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՂ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Միրանոյշ Գէորգեան

Իրանում խռովութիւնը կենտրոնանում է եռեակի՝ ընդդիմադիր Մուսաւիի, Այաթուլահ Ալի Խամենէի եւ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի շուրջ: Պաշտօնական Թեհրանը չեղեալ յայտարարեց Հայաստանի պատւիրակութեան այցը՝ Իրանում շարունակուող բռնութիւնների պատճառով:

Հայաստանի պաշտօնական պատւիրակութեան այցը Իրան չեղեալ յայտարարեց հիւրընկալող երկրի կողմից, քանի որ Իրանում շարունակուում են յետընտրական անկարգութիւնները:

Աժ նախագահ Ռոբերտ Աբրահամեանի գլխաւորած պարւիրակութիւնը պէտք է Յունիսի 20-ին երկօրեայ այցով մեկնէր ԻԻՀ: Պատւիրակութիւնը կազմում էին Աժ եւ ՀՀ կառավարութեան ինը բարձաստիճան պաշտօնեաներ եւ պաշտօնատար այլ անձինք: Ինչպէս տեղեկացնում են ՀՀ Աժ հասարակայնութեան հետ կապերի վարչութիւններից, այցը յետաձգել է անժամկետ:

ՀՀ Աժ նախագահի մամուլի քարտուղար Նայիրի Պետրոսեանը «ԱրմենիաՆաուս» ասաց, որ ճիշտ չի լինի այցի յետաձգման պատճառները յայտնել:

Ուժգին խռովութիւնները խաթարել են Հայաստանի հարաւային հարեւանի առօրեայ կեանքը: Ինչպէս հաղորդուում է, ոստիկանութեան եւ ընդդիմադիրների

բախումների հետեւանքով առնուազն 19 մարդ է զոհել: Չհաստատուած տեղեկատւութեան համաձայն՝ զոհերի թիւը հասնում է 150-ի:

Թեհրանում Հայաստանի պատւիրակութիւնը հանդիպումներ պէտք է ունենար վերջերս վերընտրուած Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանիի եւ Անվտանգութեան բարձրագոյն խորհրդի քարտուղար Սաիդ Ջալիլիի հետ:

Երեւանում գործող Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի ([www.acnis.am](http://www.acnis.am)) տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանը կարծում է, որ հայկական պատւիրակութեան այցի յետաձգումը ճիշտ էր, քանի որ «Իրանում այժմ շատ վատ ժամանակներ են»:

«Իրանում այժմ այնքան ներքին տագնապ կայ, որ պէտք է սպասել, մինչեւ ներքին իրավիճակը կարգաւորի այնտեղ: Նոյնիսկ ԱՄՆ իշխանութիւնները մինչեւ այժմ խստօրէն չեն արձագանքել Իրանի իրադարձութիւններին, քանի որ դա կը դիտւէր, որպէս Իրանի ներքին գործերին միջամտելու փորձ», - ասում է Կիրակոսեանը:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաուս»  
[www.armenianow.com](http://www.armenianow.com)



## ԱՄԱՌԱՅԻՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ

Փայիանէ Արրահանեան

ՀԱԿ-ի ղեկավար՝ Լեւոն Տէր Պետրոսեան



ՀՅԴ գերագոյն մարմնի նախագահ՝ Արմէն Ռուստամեան



Ժառանգութիւն կուսակցութեան նախագահ՝ Րաֆֆի Յովհաննիսեան



### Կը յաջողի՞ ընդդիմութեան՝ գոնէ այս պահին յայտնի երեք թեւերին՝ ՀԱԿ, «Ժառանգութիւն» եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, միաւորել մինչեւ առաջիկայ 2012 թ. խորհրդարանական ընտրութիւնները

Քաղաքական սեզոնի վերջին հանրահաւաքից յետոյ Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարած հայ ազգային կոնգրէսը սեզոնի ընթացքում արդէն երկրորդ անգամ թայմաութ վերցրեց մինչեւ Սեպտեմբեր: Ինչպէս նշում է քաղաքագետ Անդրանիկ Թեւանեանը. «Քաղաքական դաշտում գովազդային դադար է յայտարարւած»:

Շատերն այս դադարը գնահատում են որպէս ժամանակի շահում որոշ հարցեր ու դիրքեր ճշտելու համար, մինչդեռ իշխանութեան ներկայացուցիչները վրստահ են, թէ համաժողովրդական շարժումը սպառել է իրեն եւ «տարբեր պատճառներ է փոքրում ժողովրդին տուն ուղարկելու համար»:

Ո՛ւր է գնում ընդդիմութիւնը, կը յաջողի՞ ընդդիմութեան՝ գոնէ այս պահին յայտնի երեք թեւերին՝ ՀԱԿ, «Ժառանգութիւն» եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, միաւորել մինչեւ առաջիկայ 2012 թ. խորհրդարանական ընտրութիւնները: Այս հարցն է, որ յուզում էր Մատենադարանի մօտ հաւաքւած ժողովրդին, եւ որի պատասխանը նրանք չստացան:

Նախորդ երկու շաբաթները

ցոյց տւեցին, որ ընդդիմութիւնն իսկապէս որոշ հարցեր ճշտելու խնդիր ունի, կանգնած է փակուղու առաջ ու պէտք է ճշտի իր հետագայ անելիքները:

Աւագանու ընտրութիւնները ոչ միայն վերածեցին իշխանական դաշտը, այլեւ հակասութիւններ առաջացրին ընդդիմադիրների շրջանում: Ընտրութիւնների վերջնական արդիւնքները յայտարարելուց յետոյ «Ժառանգութեան» ներկայացուցիչների՝ ՀԱԿ-ին ուղղւած քննադատական ուղերձները պարզորոշ ցոյց տւեցին, որ ընդդիմութեան շարքերում լարւածութիւն կայ, եւ այդ մասին «Ժառանգութիւնը» լուծ էր ընտրութիւններից առաջ՝ չվնասելու իր համբաւը:

«Ժառանգութեան» երկար պահած գայրոյթն արտայատեց պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը՝ ասելով, որ «ընտրութիւնները ցոյց տւեցին, որ ՀԱԿ-ը իբրեւ քաղաքական ուժ կայացած չէ»: Դրան յաջորդեց առաւել խիստ քննադատութիւնը՝ կրկին Փոստանջեանի շուրթերից. «Իւրաքանչիւր քաղաքական ուժ, որը յաւակնում է ժողովրդի քւէին, պէտք է կանգնած լինի ժողովրդի

կողքին ոչ թէ պարբերական ինչ-որ միջոցառումների միջոցով, այլ յատկապէս ամենակրիտիկական իրավիճակներում: Ես կարծում եմ՝ Մարտի 1-ի առաւօտեան եւ դրանից յետոյ, անկախ նրանից, Լեւոն Տէր-Պետրոսեանին իր տանը կալանաւորել էին, թէ ոչ, նա պէտք է լինէր ժողովրդի կողքին»:

Սա վերջին մէկ տարւայ ընթացքում առաջին կոշտ դիրքորոշումն էր, որ հնչեցւեց ոչ թէ իշխանական ներկայացուցիչների, այլ հենց ընդդիմութեան կողմից:

Եթէ մինչեւ ընտրութիւնները «Ժառանգութիւնը» խուսափում էր պարզաբանել ընտրութիւններին չմասնակցելու իր որոշման պատճառները, ապա յետոյ բացեց փակագծերը.

«Այդ ընթացքում ընդդիմադիր մամուլը ծայրայեղ վատաբանութիւններ հնչեցրեց «Ժառանգութեան» հասցէին: Սենք տեսնում էինք, որ մեր գործընկերների եւ ընդդիմադիր մամուլի կողմից չկայ այդ տուլերանտ վերաբերմունքը, որ թոյլ տային նաեւ երկրորդ ընդդիմադիր ուժին գործի, որովհետեւ դա ոչ թէ թուլացնելու էր ընդդիմադիր ճակատը, այլ ընդհակառակը՝ հզորացնելու էր, -

ասում է պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը՝ յաւելելով. «Եթէ մենք մեր թեկնածութիւնը դնէինք, առճակատում կը լինէր, եւ ընդդիմադիր զանգուածը կը հիասթափւէր»:

Մարտիրոսեանի յայտարարութիւնից պարզ է դառնում, որ Հայաստանում որքան տոտալիտար է իշխանութիւնը, նոյնքան տոտալիտար է նաեւ ընդդիմութիւնը, որը նախկինում իր կողքին չկանգնածներին անւանում էր «դաւաճան»:

Սակայն Տէր-Պետրոսեանը փոխեց ամբողջատիրական իր մարտավարութիւնը. այսօր բոլոր «դաւաճանները» հնարաւորութիւն ունեն միանալու ՀԱԿ-ի առաջարկած 12 կէտից բաղկացած պլատֆորմին եւ «ուղղել իրենց սխալը»:

«Ինձ համար անհասկանալի է ընդդիմութեան դաշտում առաջացած հրմշտոցը: Այդ դաշտը այնքան ընդարձակ է, որ կարող է տեղաւորել բոլորին: Մենք պատրաստ ենք ընդդիմութեան դաշտում գրկաբաց ընդունել ցանկացած կուսակցութիւն՝ չվախենալով մրցակցութիւնից եւ բաց չթողնելով համագործակցութեան որեւէ առիթ», -ասաց Տէր-Պետրոսեանը:

Ըստ քաղաքագէտ Երւանդ Բոգոյեանի՝ ընտրութիւններից յետոյ ընդդիմութեան բուրգային համակարգը փլուզւեց, եւ այլ ձեւաչափ է գործելու:

«Տէր-Պետրոսեանի հաշւարկը՝ ստեղծել մի ամբողջատիրական ընդդիմութիւն, արդարացած էր, քանի որ գործում էր այս տրամաբանութիւնը՝ եթէ իշխանութիւնը կուռ է, դրա դէմ հնարաւոր է պայքարել միայն կուռ ընդդիմութեամբ», -«Արմենիանաւ»-ին ասում է Բոգոյեանը:

Քաղաքագէտի դիտարկմամբ՝ քաղաքական դաշտում տեղի են ունենում միմեանցից տարբեր գործընթացներ՝ իշխանութիւնը էլ

աւելի կամրապնդի իր միապետական դիրքերը, իսկ ընդդիմութիւնը՝ հակառակը՝ կը տրոհուի:

Այսինքն՝ ընդդիմութիւնն այսօր կանգնած է երեք մարտահրաւերների առաջ. ոչ միայն պայքարել իշխանութեան դէմ, այլեւ պահել ու միաւորել ընդդիմութեան բոլոր թելերով, եւ ամենակարելորդ ու դժուարը՝ յաջողութեան հասնել՝ գալ իշխանութեան:

Այս վերջին նպատակակէտին հասնելու առումով ընդդիմութիւնը կանգնած է անելանելի փակուղու առաջ: Տէր-Պետրոսեանը բազմիցս նշել է, որ իրենք իշխանափոխութիւն են անելու միայն սահմանադրական ճանապարհով, այսինքն՝ ընտրութիւնների միջոցով, սակայն նոյն Տէր-Պետրոսեանը կրկին բազմիցս նշել է, որ Հայաստանում ընտրութիւններ տեղի չեն ունենում, եւ ընտրութիւնների միջոցով իշխանափոխութիւն իրականացնելն անհնար է:

«Մեզ մօտ անգամ ի յայտ է եկել կլիշէներ, որ, ասենք՝ սահմանադրական ճանապարհով գնալ նշանակում է գնալ պարտութեան», -ասում է Բոգոյեանը: Ո՞րն է այս փակ շրջանից դուրս գալու ուղին:

Ըստ Բոգոյեանի՝ հէնց սահմանադրութեան փոփոխութիւնը եւ նոր ուժի ձեւաւորումը կը բերի նաեւ երկրի կառավարման նոր համակարգի:

«Եթէ սահմանադրութիւնը թոյլ է տալիս անընդհատ օրէնքները խախտել, ապա այդ սահմանադրութիւնը վատն է ու թերի, եւ պէտք է փոխել հէնց այդ սահմանադրութիւնն ու բրգածեւ համակարգը», - կարծում է քաղաքական վերլուծաբանը:

Իրավիճակի փոփոխութիւն, ընտ Բոգոյեանի՝ հնարաւոր է նոր ուժի, նոր գաղափարների կրողի միջոցով, որն առաջ կը բերի ոչ թէ իշխանափոխութեան, այլ համակարգի փոփոխութեան պահանջ:

«Մինչեւ չփոխուի համակարգը, ոչինչ չի փոխուի: Նոր նախագահի հետ պարզապէս կը փոխուեն օլիգարխները: Այսօրայ բենզինի մեծաշնորհը կանցնի մէկ ուրիշին եւ այդպէս շարունակ», -համոզւած է Բոգոյեանը, ով արմատական ընդդիմութեան մէջ այսօր դեռ չի տեսնում այդ փոփոխութիւնը:

«Եթէ 88-ի շարժման ժամանակ մարդիկ գոռում էին «Միացում», «Ղարաբաղ», ապա այսօր գոռում են «Լեւոն նախագահ», այսինքն՝ եթէ նախկինում կար գաղափար, ապա այսօր միայն անձեր են: Նոյն մեղադրանքները, որ 1996 թ. ընդդիմութիւնը հնչեցնում էր Տէր-Պետրոսեանի իշխանութեան հասցէին, նոյն մեղադրանքները ինքը հնչեցնում է այսօրայ իշխանութեան հասցէին»:

Նոր ուղի ստեղծման հէնց այս գաղափարը ոչ ուղղակիօրէն հընչեցնում է «ժառանգութիւնը»:

Վերջերս պատգամաւոր Փոստանջեանն ասել էր, որ «Հնացած ձեւաչափերով, հնացած ցուցակներով, թող չվիրաւորեն՝ նաեւ հնացած մարդկանցով չի կարելի հանդէս գալ»:

Մեր ժողովուրդը արդէն ցանկանում է նոր շունչ, նոր մօտեցում»:

«Ժառանգութիւն»-Դաշնակցութիւն տանդեմի հնարաւորութիւնը չի բացառում նաեւ Բոգոյեանը:

«Դաշնակցութիւնը չունի ընդգծւած առաջնորդ, ինչն ունի «ժառանգութիւն»-ը՝ ի դէմս Րաֆֆի Յովհաննիսեանի, իսկ «ժառանգութիւն»-ն էլ չունի ողջ երկրում տարածւած կուսակցական կառոյցներ, ինչն ունի Դաշնակցութիւնը,- պարզաբանում է վերլուծաբանը: -Այս երկու ուժերը միաւորելով, գուցէ, ընդդիմութիւնը հետագայում հասնի յաջողութեան»:

Աղբիւր՝ «Արմենիանաւ»  
[www.armenianow.com](http://www.armenianow.com)

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆՇՄԱՐՆԵՐ

## ՖՈՐՈՒՄ

Կոլիա Տէր Յովհաննիսեան

*Անդամակցելով համացանցային հայերէն ֆորումներին՝ մեկին՝ հիանալի առիթ է ընձեռնել շփուելու Հայաստանի երիտասարդութեան հետ, ծանօթանալու նրանց յուզող հարցերին, կրօնական հակումներին, քաղաքական հայեացքներին, երազանքներին, ապրումներին, հոգեկան տւայտանքներին, մի խօսքով՝ նրանց առօրեային: Դրա արդիւնքում բացայայտում են ինձ համար անծանօթ մի շարք երեւոյթներ: Չեն ժխտում այն հանգամանքը, որ թերեւս դրանք նորութիւն չեն, սակայն, նոյնիսկ եթէ չեն, ըստ իս, արժէ դրանք քննարկել հրապարակայնօրէն, քանզի նոյն ազգին պատկանելով հանդերձ, մենք շատ հեռու ենք իրարից եւ նման քննարկումները կօգնեն աւելի ճանաչել մէկս միւսին եւ աստիճանաբար վերացնել այն անջրպետը, որը զոյացել է հայութեան երկու հատւածների՝ հայրենիքի ու սփիւռքի միջեւ:*

Այստեղ յապաւումներով ներկայացնում են «Սարդարապատ» թեմայի տակ ծայր առած բանավեճը, վերջնական եզրայանգումը թողնելով սիրելի ընթերցողներին:

**Տիգրան (Երեւան, ՀՀ).** - Միանում եմ շնորհաւորանքներին: Ու գրում եմ այս թեմայում, քանի որ ՀՀ առաջին Հանրապետութեան հռչակումը Սարդարապատ, Ղարաքիլիսա, Բաշ Ապարան հերոսական ճակատամարտերի հետեւանքն էր: Այդ ճակատամարտերում է որոշւել, այսօրայ Հայաստանի լինել չլինելու հարցը: Ցաւօք սրտի մենք վերջին, կրիտիկական պահին ենք հերոսանում: Յուսով եմ այս եւ նման դասերը լաւ կը սերտենք եւ ապագայում չենք թողնի, որ կրիտիկական պահ հասունանայ միասնանալու եւ թշնամուն համախմբւած ուժեղ հակահարած հասցնելու հա-

մար:

**Յ.Գ. Կարծում եմ, մեր երեխաներին ոչ միայն Ծիծեռնակաբերդի յուշահամալիր պիտի տանենք, այլեւ ամէն Մայիսին պիտի Սարդարապատ այցելենք, որ մեր սերունդների ոգին հերոսամարտերի պատմութիւնը սերտելով հզօրանայ:**

**Լիլիթ (Քեւառու կամ Գաւառ, ՀՀ).** - Անտեսանելի գաղափարական Սարդարապատը մինչեւ իս. Միութեան փլուզւելը վաղուց սկսւած էր եւ դեռ շարունակւում է, բայց մեր ժողովրդի ո՞ր մասն է գիտակցում այդ ամենավճռական ճակատամարտում իր մասնակցութեան անհրաժեշտութիւնը...

Մենք սրա՛ մասին պիտի մտածենք, սա՛ պէտք է լինի մեր առաջնահերթ խնդիրը:

**Հրայր (Նիւ-Ջերսի, ԱՄՆ).** - Արդեօք դպրոցներում դասաւանդւո՞ւմ է Սարդարապատի եւ ընդ-

հանրապետ նախախորհրդային հայոց պատմութիւնը:

**Լիլիթ.**- Այո, դասաւանդուում է:

**Ես (Թեհրան-Իրան).**- Իսկ ինչպէ՞ս է, Լիլիթ, աշակերտութիւնը վերաբերուում դրան:

Ուզում եմ ասել, իրահրու՞ւմ եմ նրանց ազգայնական մտտիւները: Կազմաւորու՞ւմ է արդեօք մի սերունդ, որ հարկ եղած պարագային (աղօթենք, որ երբեք չլինի), պատրաստ կը լինի կերտել երկրորդ Սարդարապատ: Ինձ մօտ կայ այն համոզումը, որ սփիւռքահայերը աւելի ազգային են, քան բնիկ հայերը:

**Լիլիթ.**-Գիտե՞ս, Կոլիա, քեզ հետ համամիտ եմ: Ինքս էլ զգացել եմ, որ սփիւռքահայերն աւելի ազգային են, ինչպէս դու ես ասում, աւելի մօտ եկեղեցուն: Իսկ Սարդարապատը, ի ցաւ սրտիս, ոգեւորում է լոկ այնքան, որքան դասաժամ անցնում եմ...

**Սաթենիկ (Երեւան).**-Յարգելիներս թոյլ տւէք ձեր հետ չհամաձայնել: Լիլիթ ջան, եկեղեցուն մօտ լինելը չի նշանակում ազգասէր լինել:

Ազգային են սփիւռքի հայերը ու դրա համար ամուսնանում են այլազգիների հետ, փոխում ազգանունները: Ազգը՞: Լաւ էլի...

Բացառութիւններ լինում են, բայց ցաւօք նրանք մեծ թիւ չեն կազմում:

**Ես.**-Սաթենիկ ջան, ինձ թւում է՝ սխալ պատկերացում ունես սփիւռքահայութեան մասին կամ Սփիւռքը շփոթում ես Յայաստանից Ամերիկա կամ Ռուսաստան գաղթած հայերի կամ այսպէս ասած՝ Նոր Սփիւռքի հետ: Հին սփիւռքահայերի այլազգիների հետ ամուսնանալու դէպքերը իրօք բացառութիւններ են, եւ այն էլ շատ-շատ չնչին տոկոսով: Դա թերեւս նոր սփիւռքահայերի «մեմաշնորհն» է: Դեռ չեն խօսում Թուրքիա եւ շէյխերի կղզիները գնացածների մասին: Նոյն պատկերն է Ամերիկայում: Տղաներն էլ պակաս չեն Ռուսաստանում:

Իսկ հայ եկեղեցին Սփիւռքում իր կրօնական դրածքից աւելի շատ կրում է ազգային բնոյթ: Այնտեղ են ծաւրել հայորդիները, երբ հալածել ու քարկոծել են բնիկների կողմից: Այնտեղ է խօսել Վարդանանքի ու Սարդարապատի մասին, որովհետեւ տւեալ թեմաների արժարձումը դպրոցներում կամ եկեղեցուց դուրս երբեմն արգելւած է եղել: Մեր հոգեւոր առաջնորդներից ոմանք կրօնական լինելուց առաջ եղել են ազգային հերոսներ:

Այսպիսով, ես կարող եմ պնդել, որ հին Սփիւռքում իւ-

րաքանչիւր հայ մարդ, նոյնիսկ եթէ մոռացած լինի լեզուն, աւելի հզօր ազգային է, քան բնիկ հայերը: Եւ դա ունի իր էթնիկ ու պատմական ազդակներն ու պատճառները, որոնցից զուրկ է եղել Յայաստանի հայութիւնը համայնավարական շրջանում:


**Տիգրան.**- Կոլիա, մասամբ ճիշտ ես՝ հին սփիւռքահայերը աւելի ազգային են, քան բնիկ հայերը: Խնդիրը կայանում է նրանում, որ ԽՍՀՄ-ի տարիներին հասարակութեան հոգեբանութիւնում ազգայինը մղել է յետին պլան ու սրա հետ մէկտեղ պետականը նոյնպէս: Դրա համար էլ մեր հասարակութիւնում դեռ շատ թոյլ է ձեւաւորւած ազգային եւ պետական մտածելակերպը: Ինչչեւ սա ժամանակի եւ սերնդափոխութեան խնդիր է: Բայց ինչպէս դու ես ասում՝ ամէն ինչ այդքան էլ անյոյս չի: Կան, թէ տղաներ, թէ աղջիկներ, որոնց մօտ ազգայինը առաջնային տեղում է եւ եթէ թէկու՞՛ Աստուած չանի, հէնց այսօր էլ կարիք լինի կրկնել Սարդարապատը, ապա համոզւած եմ, մենք ի վիճակի ենք այդ անելու:

**Լիլիթ.**- Տիգրան, քեզ հետ համաձայն չեմ, քանզի կարծում եմ, հերիք է ամէն ինչ բարդել ԽՍՀՄ-ի գլխին ու նոյնիսկ ազգայինի, ազգայնականի բացակայութիւնը դրա հետ կապել: Նա, ով ԽՍՀՄ-ի ժամանակ ազգայնական էր, հիմա էլ այդպիսին է, եւ հակառակը, անկախ դրսեւորումներից: Ասել կուզեմ, որ *եւթիւնն* է կարելոր, ոչ թէ լոկ ժամանակահատւածը:

Իսկ Սարդարապատը, այդ մասին վերելում նշել եմ, անտեսանելի, գաղափարական Սարդարապատն արդէն իսկ սկսւած է, բայց այդ անտեսանելի պատերազմը զգացողները եւ դիմակայողները սակաւաթիւ են: Այսօրւայ ողբերգութիւնը հէնց դա է...

Յ.Գ. ԽՍՀՄ-ի տարիներին բազմաթիւ էին սայթաքումները, ողբերգութիւնները, սա անժխտելի է,





սակայն այդ տարիներին Հայաստանում ազգայինը հասաւ այնպիսի զարգացման, որպիսին չէր եղել Հայաստանի պատմութեան վեջին 2000 տարւայ ընթացքում: Միթէ համաձայն չե՞ս, եւ կարո՞ղ ես այդ ակնառու փաստը ժխտել:

**Տիգրան.**- Լիլիթ ջան, նախ ԽՍՀՄ-ի գլխին բարդելով, ես մեզ չեն ազատում պատասխանատուութիւնից համարեա թէ ոչինչ չենք իմացել: Իսկ պատմութեան կորուստի տրամաբանական հետեւանքը ազգայինի կորուստն է: Ինչեւէ, յուրախութիւն մեզ, այդ տարիներին գտնւեցին այնպիսի անհատներ, որոնք կարողացան ազգին ոտքի հանել: Բացի դա չի նշանակում, որ հասարակութիւնում առկայ էր նորմալ ազգային մտածելակերպ, այն արդէն խեղաթիրւած էր: Եւ իշխանութեան եկած պորտաբոյծներն էլ աւելի խեղաթիրեցին այն, որի պտուղներն էլ մենք այսօր ունենք:

**Սաթենիկ.**- Կոլիա, իսկ քո ասած հին սփիւռքը այսօրւայ մեր սփիւռքի քա՞նի տոկոսն է կազմում: Անձամբ իմ համար հին ու նոր չկայ, կայ մի սփիւռք, որը չպիտի լինէր, այսինքն այսքան պատերազմ ու արիւն թափւեց ոչ նրա համար որ հայը իր հայրենիքը թողնի ու դրսից գոռայ “ես հայրենասէր եմ”:

Հայը պէտք է ապրի ՀԱՅաստանում:

Յ.Գ. Թող չնեղանան ինձանից սփիւռքի ներկայացուցիչները, հայը էն ազգը չի, ում սազում է օտար երկիրը:

**Ես.**- Մօտ 75 տոկոս: Նայիր գոյութիւն ունեցող վիճակագրութիւններին: Դժւար է ընդունել, որ քեզ համար հին ու նոր Սփիւռք չկայ: Դա նշանակում է անտեսել պատմութիւնը: Հին Սփիւռքը աւելի քան չորս հարիւր տարւայ պատմութիւն ունի, իսկ նոր Սփիւռքը ընդամենը՝ 18 տարւայ, եթէ չհաշուենք ԽՍՀՄ-ի տարածքում գոյացած սփիւռքը:

Եւ յետոյ, այդքան հեշտ ու մակերեսային մի դատիր: Կարդա հին Սփիւռքի պատմութիւնը եւ գուցէ զարմանաս, թէ նրանք ոնց են կարողացել չորս դար շարունակ պահել իրենց ազգութիւնը բռնի տեղահանումներից, կոտորածներից, բռնաբարումներից ու ոչնչացման վտանգը յարատեւ զըլխներից կախւած լինելուց յետոյ: Ել չեն խօսում խտրականութեան ու բռնի ազգափոխութեան կամ կրօնափոխութեան մասին:

Իսկ Նոր Սփիւռքը:

Նրանք թողել են հայրենիքը եւ հեռացել իրենց ցանկութեամբ, վախեցել են մթից ու ցրտից: Նրանք իրենց հետ տարել են քաղքենիական,

ապագային մօտեցումներ ու դա սրսկել հին սերունդի երակներում: Նրանք հեշտ են ամուսնանում այլազգիների հետ: Եւ այս բոլորը գալիս է ապացուցելու այն փաստը, որ Հայաստանում անչափ յեղյեղուկ են եղել ազգայնական մոտիւները, ինչի մասին իրաւացիօրէն ահագանգում է Լիլիթը:


Իհարկէ հայ ազգին չի սազում օտար երկիր: Բայց այնքան էլ դիւրին չէ, թողնել այն երկրները, ուր հարկադրաբար արմատ են գցել հին սփիւռքահայերը: Դժբախտութիւնը կայանում է նրանում, որ երբ, երբեմն էլ, նրանք քանդում են իրենց տունուտեղը եւ ներգաղթում հայրենիք, միշտ չէ, որ հասնում են իրենց սրտագին մուրազին: Շատ անգամ վանում են տեղացիների կողմից, շատ անգամ հիասթափւած նորից իրենց ձեռք են վերցնում օտարութեան ցուպը, որը նշանակում է անդարձ կործանում...

**Սաթենիկ.**- Կոլիա, վիճակագրութեանը շատ մի հաւատա. ըստ վիճակագրութեան ՀՀ-ում աղքատութիւնը 9,7 տոկոս է կազմում, բայց իրականում 30-ն անցնում է:

Սփիւռքը, քո ասած հին սփիւռքը, ոչ թէ հայրենասէր է այլ հայրենաբաղձ: Գալիս են կարօտները առնում, մի քիչ լացում ու գնում իրենց երկիրը: Ձեր կարծիքով մենք էստեղ չե՞նք նեղում կամ մեր մուրազները բոլորն ի կատա՞ր են ածում: Բնա... Հայրենիքի քաղցրութիւնն իմացողը դժւարութիւն էլ կը քաշի:

Իմ մեծ պապերը հայրենադարձեր են եղել՝ գալով Հայաստան շատ դժւարութիւններ են ունեցել, բայց ընտանիք են ստեղծել հայի հետ Հայաստանում: Հալածել են. իմ պապս 12 տարի աքսորւած է եղել, բայց չի յանձնւել ու յետ չի փախել, քանի որ հայրենիքը իր համար կարելոր է եղել: Ես ոչ մէկին չեմ ուզում նեղացրած լինել, ուղղակի իրերին պէտք է իրենց անունները տալ, երբ խօսքը հայրենիքի մասին է՝ ես շատ խիստ եմ մօտենում: Ինչո՞ւ չէք գալիս ու մնում էստեղ: Հարազատի հալածածանքն է քաղցր թե՞ օտարինը: Եւ վերջապէս բազմոցին նստածը չի հասկանում իշատունակին նրստածին. լինել դրսում ու մեղադրել ՀՀ-ում ապրող հայերին, որ հայրենասէր չեն: Այ, սա է ինձ հունից հանում, թէ չէ ում որտեղ յարմար է, թող էդտեղ էլ ապրի:

*Այստեղ առայժմ կանգ է առել այս բանավէճը: Թէեւ անչափ ցանկանում էի մէջբերում կատարել Սաթենիկի այս տողերը. «բայց ընտանիք են ստեղծել հայի հետ Հայաստանում», եւ ծաւալել դրա շուրջ: Ինձ յետ պահեց այն վախը, որ գուցէ իմ հայ լինելս էլ զնայ հարցականի տակ...*



**Հարցազրոյց երգիծանկարիչ Քրիստ Հովուեանի հետ, 2009 թւականի Մարտի 1-ի միջազգային փառատօնի մրցանակը շահելու առիթով**

**ԲՈՒՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՍԻՐՈՒՄ ԵՆ ՆԿԱՐԵԼ, ՈՐՈՇՆԵՐՆ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ՆԿԱՐԵԼ**

-Քրիստ, նորերս պարզեւատրուել էք Մարտի 1-ի միջազգային ծաղրանկարի ցուցահանդէսում: Նդրում են այդ ցուցահանդէսի եւ ձեր շահած մրցանակի մասին հարկ եղած տեղեկութիւնները փոխանցել մեր ընթերցողին:  
 -Մարտի 1-ի ցուցահանդէսներից է, որն այս տարի տօնում էր իր քառասունամեակը: Դա ունի երկու հիմնական բաժիններ.

առաջինում ներկայացւում են առանձին քարթուններ, իսկ միւս բաժնում, երգիծապատկերը իր պատմութիւնը պատմում է մի քանի կադրերում: Այս տեսակի մէջ, վերջին կադրում է քարթունիստը վերջին հարածը վրայ բերում: Այս էլ ասեմ, որ ամէն տարի մի միւթ է որոշւում, օրինակ՝ ժամ, երիտասարդութիւն, եւ այլն: Այս տարւայ թեման կոչւում էր «Ստեր»: Ես գործ էի ներկայացրել

այս բաժնի եւ այս թեմայի համար, որն արժանացաւ փառատօնի *Գրանդ Փրայզին*: Մարտի 1-ի ինքը միջնադարերեան քաղաք է. պահպանել են քաղաքը շրջապատող պարիսպները: Գտնւում է Վենետիկից մէկ ժամ հեռաւորութեան վրայ: Մարտի 1-ի շախմատի քաղաք է: Նրա կենտրոնական հրապարակը մի մեծ շախմատի դաշտ է, մարդու հասակի քարերով:



-Պատմէք ձեր մասին: Ի՞նչ էք սովորել. ո՞ւր էք ապրում:  
 -Ծնել եմ 1968-ին, Թեհրանում: Երեխայ տարիքից շատ սիրել եմ նկարչութիւն անել: Գիտէք, բոլոր երեխաներն են սիրում նկարել, ինչպէս նախամարդն էլ քարանձաւներում նկարչութիւններ է արել, նախքան տառերը ստեղծելու եւ գրելը: Բայց, երբ երեխայի



© 2004 Umoristi A Marostica

տարիքը բարձրանում է, գրագետ է դառնում, թողնում է նկարչությունը: Իհարկե որոշները շարունակում են նկարել, ես էլ դրանցից էի: Անընդհատ նկարում էի՝ սիրած քարթուն կերպարների նկարները, ուսուցիչների ծաղրանկարները: Մի օր ընկերներիցս մեկն ինձ ասաց, որ էդքան նկարչութիւն ես սիրում, ինչո՞ւ չես գնում գրաֆիկ սովորես: Ասացի՝ գրաֆիկն ի՞նչ է: Այսպիսով համալսարանում գրաֆիկ սովորեցի, բայց իսկական սերս *անհմէյշն* ու քարթուն էր: «Քէյհան քարիքաթոր» ամսաթերթի միջոցով ծանօթացայ համաշխարհային ցուցահանդեսների հետ, եւ ի դէպ, առաջին ցուցահանդէսը, ուր գործս ներկայացրի, հէնց Մարոսիքան էր: Յետոյ գործս ընդունեց ԱՄՆ-ի «Դաւընփորթ» ցուցահանդէսում, ուր շահեցի առաջին դիպլոման: Ճապոնիայի Ունիէ քաղաքում կայ քարթունի մասնագիտական թանգարան. այստեղ ներկայացրած գործս «Մարգանք» թնայով արժանացաւ այցելուների ընտրած լաւագոյն գործի մրցանակին: Դա

մի սերիա էր, որի առաջին կադրում, ջուրը ցատկելու պատրաստ լողորդների մէջ կայ նաեւ մի մօրուքաւոր ծերունի՝ ձեռնափայտը ձեռքին: Երկրորդ կադրում հաս-

պէս ասում են *Գրանդ Փրայզը*: 2007-ին Ինթըրնաշնըլ Փրայզը: Իսկ այս տարի սերիայի բաժնի *Գրանդ Փրայզը*: Չայ լաւ երգիծանկարիչ Վլադիմիր Աբրոյեանն



կանում ենք՝ դա ինքը Մովսէսն է, որ իր հրաշագործ ձեռնափայտով ճեղքել է ջուրը, եւ քայլելով հանգիստ առաջ է գնում, մինչդէռ միւսները դժարութեամբ լողանում են: Մարոսիքայում 2005-ին շահել են գլխաւոր մրցանակը կամ ինչ-

էլ շահել է Մարոսիքայի մրցանակներ, բայց ոչ գլխաւոր մրցանակը:

**-Չինա Գլենդէլուն ի՞նչ գործով էք զբաղւած:**  
-«Դիզնի»-ի լայնստով գործող մի ընկերութիւնում են աշխատում:



Մենք «Դիզնի»-ի համար գովազդային գործեր ենք անում: Արդեն տաս տարի է այդտեղ են աշխատում եւ ընկերութեան *արթ դրրերքթորն* են (գեղարուեստական ղեկավար): Գիտէ՞ք, «Դիզնի»-ի քարթունների կերպարներից իւրաքանչիւրը, ասենք Միքի Մաուսը կամ Փլոթո Փոթը կամ միւսները, ունի իր ծաւալուն գիրքը, ուր բացատրած է, որ դրա նկարելու համար ինչ գոյներ եւ տառատեսակներ թոյլատրելի է օգտագործել եւ ինչ գոյներ եւ տառատեսակներ՝ ոչ: Մենք պիտի գործենք այդ գրքերում սահմանած շրջանակներում: Այս աշխատանքիս կողքին է, որ ժամ գտնելու պարագային, մասնակցում են այս քարթունի ցուցահանդեսներին:

**-Գլենդէլի հայկական միջավայրում էլ որեւէ աշխատանք տանո՞ւմ էք:**

-Ինչու չէ. եղել են դէպքեր, որ

բրոշիւրի կամ փոսթերի կարիք են ունեցել, իրենց համար գծագրել են: Բայց շատ չեն եղել այդ դէպքերը:

**-Յէնց բուն Գլենդէլո՞ւմ էք ապրում:**



Քրիստ Դովուեան  
Գործ՝ իրանցի ծաղրանկարիչ Աֆշին Սարուքիի

-Այո, հէնց իսկական Գլենդէլում. Մաջիդիւում: Չնոռանամ ասել, որ Ամերիկայում, սկզբում անունս էլ պատմութիւն էր: Անձնագրիս մէջ անունս գրած էր Christ: Դա նրանք արտասանում էին «Քրայստ» եւ Ինձ այդպէս էլ կանչում էին, որը նշանակում էր «Քրիստոս»: Մի անգամ էլ գնացել էի վարորդութեան վկայականի քննութեան համար, պատասխանատուն անունները կարդալիս բարձր ձայնով ասում է՝ նայէք, Յիսուս Քրիստոսն եկել է վկայական ստանալու: Ի վերջոյ Christ-ի հը հանեցի անունիցս, դարձայ Crist, ու հիմա հէնց «Քրիսթ» են արտասանում:

**-Շնորհակալ են ձեզանից: Նորանոր յաջողութիւններ են մաղթում:**



# ՀԱՐՅԱԶՐՈՅՅ ԱՆԴՐԱՆԻԿ ԽԵՉՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ ՉԵՌՔԸ ԵՒ ՍԻՐՏԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ



*Մէկ տասնեակից աւելի թատերական թարգմանչական հատորների հեղինակ է Անդրանիկ Խեչումեանը: Գրքերը տպագրուել են «Նիլա», «Աֆքար» եւ այլ հրատարակչությունների կողմից: Վերջին 4-ը արդէն որպէս մատենաշար՝ «Հայկական պիեսներ» խորագրի տակ՝ «Աֆրազ» հրատարակչութեան միջոցով: Աշխատանքի ծաւալն իսկ նկատի առնելով, պէտք էր անպայման հարցազրոյց ունենալ թարգմանչի հետ:*

**Շաքէ Պետրոսեան**

**-Ո՞րտեղ եւ ե՞րբ ես ծնուել, ո՞ր դպրոցներում ես սովորել:**

-Ծնուել եմ 1955 թին, Թեհրանում, սովորել եմ հայոց ազգային «Սահակեան» դպրոցում, ապա «Մազիար» եւ «Արլին» միջնակարգ դպրոցներում:

**-Ե՞րբ սկսեցիր հայկական թատերկություններ թարգմանել, եւ ինչո՞ւ հէնց պիեսներ:**

-Միշտ սեր եմ ունեցել թատրոնի եւ թարգմանութեան հանդէպ, բայց լրջօրէն զբաղուել սկսել եմ 1990-ական թւականների սկզբին. պատճառը՝, ասեմ. Հայաստանից թատերախմբեր էին գալիս փառատուն-

րին մասնակցելու: Պարզ է, որ իրանցի հանդիսատեսը քիչ տեղեկութիւններ ունի հայ թատրոնի մասին, որոշեցի ներկայացնել հայկական դրամատուրգիան: Երբ եկաւ Եւրամո Ղազանչեանը եւ բեմադրեց «Ես եմ, եկայ» պիեսը, շատ սիրեցի եւ թարգմանեցի այն. դա եղաւ իմ առաջին թարգմանությունը: Սցեմինարներում սկսեցին խօսել այդ պիեսի մասին, այս եւ ժիրայր Անանեանի «Սրբապատկերը» 1991 թին «Մշակոյթ» ծրագրից, որպէս ռադիօ բեմադրութիւն ցրեց: Երկուսի բեմադրիչն էլ Սադրեդդինէ Շաջարէն էր: Նոյն պիեսը «Պիեսների ընթերցում» փառատունին մասնակցեց, ռադիոյի դերասանների միջոցով:

**-Ինչպէ՞ս ես ընտրում հեղինակներին եւ պիեսները:**

-Մի անգամ Մոհամմադ Չարմշիրն ասաց, թէ տարբեր ոճեր կան ընտրություններիդ մէջ, քոմեդի, դրամա եւ այլն: Ես որպէս թարգմանիչ նպատակ ունեմ եղած բոլոր ժանրերը ներկայացնել իրանցի ընթերցողին: Ընտրութեան հարցում շատ կարեւոր եմ համարում, որ պիեսները բեմադրական հնարաւորութիւններ եւ տարողունակութիւն ունենան, կարեւոր է նաեւ թէ պիեսը ինչ է ուզում ասել, ինչ պատգամ ունի, ընդհան-

րապես: Կարծում եմ, որ պիտի պատգամ ունենայ՝ մարդասիրական, բարոյական սկզբունքներ, անարդարությունների մերժում. յաւերժական, համամարդկային թեմաներ, որոնք բոլորինն են: Լեւոն Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», օրինակի համար: Ուժի, իշխանութեան, արդարութեան խնդիրներ են դրուած այնտեղ, հարցը միայն հայոց պատմութիւնը չէ: Խողիկեանի՝ «Մոռացած օրը», երկու անուն ունի, «Խաղ բոլոր դարերի համար»: Բռնապետ տիրակալի մասին է, որը կարող է ամէն տեղ լինել ու ցոյց է տալիս թէ՛ ոնց մի տիրակալ, անմարդկային իր կրքերի համար ոչնչացնում է թէ՛ իրեն եւ թէ՛ ժողովրդին:

**-Թւում է թէ շատ ես հաւանում Կարինէ Խողիկեանի պիեսները, Ժիրայր Անանեանինը: Ուրիշ -ի՞նչ հեղինակներ ես հաւանում եւ թարգմանում:**

-Սիրում եմ նաեւ Գագիկ Կարապետեանի պիեսները, օրինակ՝ «Քիլերը», որը «Ֆարհանգսարայէ Նիւաւարան»-ում ռադիօ բեմադրում ունեցաւ: Քննադատները շատ լաւ անդրադարձան այդ գործին: Բեմադրիչը օգտագործել էր նոյն դիալոգները, սակայն միջավայրը դարձրել էր պարսկական, հեռացել էր նախնական, իսկական բնոյթից: «Ձինուորը» տպւել է, բայց դեռ չի բեմադրւել, Սամւէլ Կոսոյեան, Սամւէլ Խալաթեան..., բոլորին էլ վերը նշուած պատճառներով հաւանում եմ:

**-Գիտենք, որ թարգմանութիւնը պէտք ունի առնազն երկու լեզւի խոր, կամ շատ լաւ իմացութեան: Ինչպէ՞ս ես յաղթահարում լեզւական, ոճական, առանձնայատուկ դժարութիւնները եւ տերմինաբանութիւնը:**

-Լեզւից բացի փորձառութիւնն էլ է կարելոր. քանի որ թատրոնով եմ զբաղւում, ռեժիսորական աշխատանք եմ տանում, կարողանում եմ բեմում աւելի ճիշտ հնչւող բառեր եւ նախադասութիւններ ընտրել, թարգմանութեան մէջ կայ այսպիսի մի սկզբունք. բառը, որ ընտրում ես՝ բնագրին համագոր պիտի լինի եւ նոյնական ազդեցութիւն գործի: Յատկապէս այս տասնամեակում խօսակցական լեզուն է շատ ընդունուած թատերական գրականութիւնում, կարծում

եմ, որ տիրապետում եմ պարսկերէն խօսակցական լեզւի նրբութիւններին եւ դա ինձ շատ է օգնում: Դրժբախտաբար այդ ոճը ընդունուած չէ Հայաստանում, այնտեղ հիմնականում բեմում տիրող է գրական լեզուն:

**-Պիեսը գրւում է խաղալու՝ բեմադրութեան համար: Ուրիշ բեմադրութիւններ էլ եղե՞լ են կամ սպասւո՞ւմ են:**

-Պիեսը միայն որպէս գիրք՝ կարող է չներկայացնի թատերկի իրական արժէքը: Լաւ բեմադրութեան ժամանակ է երեւում բոլոր դրական ու բացասական կողմերը: «Բանու» փառատօնում բեմադրւեց «Սիււտը եւ Սուդաբէն», հեղինակ Գեորգ Դարֆի, քանի որ «Ալիք»-ը տպւել էր յայտարարութիւնը, բեմադրութեանը ներկայ էին նաեւ հայեր: Որպէս թարգմանիչ՝ ինձ բեմ հրաւիրեցին. շատերը մօտեցան, հայ թէ պարսիկ, շնորհաւորեցին ու ասացին ինչ լաւ է, որ այսպիսի լաւ պիեսներ կան, ինչ լաւ է, որ հայ դրամատուրգը հիմք է ընդունել Շահնամէի յայտնի դրուագը: Նոյն փառատօնում բեմադրւելու է Ջան Փաթրիքի «Տարօրինակ տիկին Սելիջը»: Եսլամշահրում տարբեր փառատօներում բեմադրւեց Վիլիամ Սարոյեանի «Յէյ ո՞վ կայ» պիեսը, շատ լաւ ընդառաջւեց: Նաեւ բեմադրւեց Սուսաննա Յարութիւնեանի «Ներդաշնակութիւն»-ը, առանձին գրքով դեռ չի տպւել:

**-Յաջորդո՞ւ ... նո՞ր պիես ես թարգմանում:**

-Շուտով մի պիես կը տպւի՝ «Ասպետը եւ արքայագնը», Ջօրայր Խալափեանն է հեղինակը, շատ յոյս ունեմ, որ այս պիեսը կը բեմադրուի ոչ միայն փառատօներում, այլ «Թէաթր Շահր»-ի դահլիճներում, քանի որ թեման վերաբերում է Դոն Կիխոտին եւ Համլետին, ուր Սերւանտեսի եւ Շեքսպիրի հերոսները հանդիպում են: Հեղինակը լուրջ խորանում է փիլիսոփայական հարցերում, բայց նաեւ երգիծական ու ողբերգական երանգներ ունի:

**-Անդրանիկ, քեզանից առաջ եւ յետոյ կա՞ն հայկական պիեսներ թարգմանողներ:**

-Դժբախտաբար, առայժմ՝ մենակ եմ: Բայց տարի-



ներ առաջ Աւետիս Ահարոնեանի «Արցունքի հովիտը» թարգմանել է Մատթեոս Խանմելիքեանցը, մօտ քսան տարի առաջ: Ուր որ է՝ իրեն առողջութիւն են ցանկանում, յոյսով են էլի կը թարգմանի: Պարսկերէնից հայերէն թարգմանութիւններ կան, յանձինս Էդարդ Յախվերդեանի՝ թարգմանել են «Վարզիլի կոպալաւորը», «Թելադրութիւն» եւ «Ձահաքը» (Աժդահակը) երեքն էլ Ղուամհոսէյն Սաեդիի գործերից: Նորվանը թարգմանել է «Յագկերտի մահը», որը շատ լաւ թարգմանութիւն է Բահրամ Բէյգաիից: Տեսնում էք, թէ որքան քիչ մարդիկ են զբաղուում դրամատուրգիայի թարգմանութեամբ: Ցանկանում են եւ յոյս ունեն, որ «Ազատ» համալսարանի հայերէն լեզւի շրջանաւարտները աւելի աշխոյժ դեր եւ մասնակցութիւն կունենան երկու լեզուների թարգմանչական աշխատանքներում:

**-Նախքան թարգմանութեամբ զբաղելը թատրոնում աշխատել ես որպէս բեմադրիչ: Պատմիր սկզբից:**

-Բացի դպրոցական շրջանից, ուր բոլորս մնան փորձառութիւն ունենք, առաջին պիեսը, որ գրել են կոչուում էր «Տող գող», այդ խաղով զբաղւող ծերուկների մասին, բեմադրել են «Սահակեան» դպրոցում նախքան յեղափոխութիւնը: Մօտ տաս պիես են բեմադրել Իրանահայ ազգային մշակութային միութիւնում: Արամ Աշոտ Պապայեանի «Որքան ժպիտ կայ շուրջս», «Գնա մեռիր, արի սիրեն», Յրանտ Յամբարձումեանի «Ես էս տանը, Օնջի՞չ», «Ռափայէլ աղան Ամերիկայում» պիեսները եւ Յ.Մ.Մ.«Սիփան» միութիւնում բեմադրել են Մոլիերի «ժլատը»: Դոկտոր Ֆարիադ Նազերգադէ Քերմանիի «Ուսապարկով մարդը» շայաստանում են բեմադրել:

**-Ուրիշ բեմադրութիւններ էլ ունեցե՞լ ես շայաստանում:**

-«Արմ մոնօ» փառատօնում բեմադրել են «Ժամնա Դ՛ Արքը խարոյկի վրայ», որի հեղինակն է Մոհամմադ Ռահմանեանը, մոնօ ներկայացում էր, որի դերակատարը՝ Ֆարիբա Խադեմին ընտրուեց փառատօնի լաւագոյն դերասանուհին:

**-Անդրանիկ, գիտենք , որ շայաստանում «Արտաւազը» թատերական մրցանակ է շնորհւել քեզ, ո՞ր բեմադրութեան համար էր:**

-Նոյն փառատօնի վերջին՝ մրցանակաբաշխման օրը, պրն Երւանդ Ղազանչեանը՝ ժիւրիի նախագահը, ինձ շնորհեց «Արտաւազը» մրցանակը, Իրան շայաստան թատերական կապը ստեղծելու եւ ընդլայնելու համար: «Յամլետի դերակատարը» պիեսով, որ Էգաթոլլահ Մեհրաւարանի գործն է, մասնակցեցի «Արմ մոնօ»-ի յաջորդ փառատօնին, որը շատ լաւ ընդառաջւեց հանդիսատեսի կողմից: Յետաքրքիր է, որ «Ժամ դ՛ Արքը խարոյկում» բեմադրութեան վերջում «Ձիւնորի երգը» (Թռչէ՛ի մտքով տուն) մեր դերասանը կատարեց պարսկերէն լեզուով, որը յուզեց եւ խանդավառեց հայ հանդիսատեսին:

**-Ի՞նչ էիր անում նախքան բեմն ու բեմադրութիւնը եւ թարգմանչական աշխատանքը:**

-Մի առիթով դոկտոր Նազերգադէ Քերմանին նոյն հարցը տուեց եւ ես ասացի «Ձեռքս մի տեղ է, սիրտս՝ ուրիշ տեղ, արիեստաւոր են»: Նա ասաց, թէ հետաքրքիր է, ինչպէս Չեխովը:

**-Նոր ծրագրե՞րդ...**

-Կարճ պատմւածքներ են թարգմանում: **Հիմա ձեռքս էլ, սիրտս էլ նոյն տեղումն են:** Երկու տարի է միայն զբաղւում են թատրոնով եւ թարգմանութեամբ:

**-Տեղեակ ենք, որ Իրանի թատերական գործիչների հետ սերտ համագործակցում ես:**

-Այո, «Թատրոնի տուն»-ի անդամ են, եւ նաեւ Իրանի «Դրամատուրգների Կենտրոն»-ի վարչութեան կազմում են:

**-Առաջին հայն ես այդ վարչութիւնում. ընդունեք մեր շնորհաւորանքները եւ շնորհակալութիւն հարցազրոյցի համար:**

-Ես էլ շնորհակալ եմ ուշադրութեան եւ հարցազրոյցի համար:



# ՀԱՅՈՑ ԼԵՉԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ 3 ՏՈԿՈՍ Է

«Armenian PowerSpell 2009»-ը (Հայոց լեզվի ուղղագրութեան ստուգման ծրագիր) ծրագիրը 97 տոկոս հայոց լեզվի ծածկոյթ է ապահովում: Ասինքն՝ ծրագիրը ճանաչում է հայոց լեզվի մեջ կիրառուղ բառերի 97 տոկոսը: Այն ստուգում է ուղղագրութեան օրէնքները, պարզագոյն քերականական ու կետադրական, շարահիւսական սխալները եւ այլն: «Armenian PowerSpell 2009»-ն իր մէջ ներառում է նաեւ յապաւումների բառարան, գտնում է ոչ հայկական բառերը եւ հնարաւորութիւն տալիս փոխարինել դրանք հայերէն տարբերակով: DigiTec Business 2009 ֆորումին այսօր «Պարթեւ-Պապեան» ՍՊԸ-ի դիստրիբիւտոր, հայոց լեզվի ուղղագրութեան ստուգման ծրագրի հեղինակ Արմէն Բոշեանը ներկայացրեց իր իսկ մշակած «Armenian PowerSpell 2009»-ը:

«Մենք գործ ունենք աշխարհի ամենաբարդ լեզուներից մէկի՝ հայոց լեզվի հետ: Այստեղ միայն բայի կիրառման ձեւերն այնքան շատ են, որ ծրագիրը միայն բառարանով չի աշխատում, այլ վերլուծում է կատարում ըստ բառի կիրառման ձեւի», - «Հետքի» հետ զրոյցում նշեց ծրագրի հեղինակը:

Ծրագրի բացթողումը «երեք տոկոսն է», այսինքն՝ երբ այն ճիշտ բառը չի ճանաչում, իսկ այդ դէպքում բաժանորդը պարտաւորում է տւեալ աւելացնել բառարանի մէջ, որպէսզի այն յաջորդ անգամ ճանաչի:

«Armenian PowerSpell 2009»-ը 9 տարւայ պատմութիւն ունի: Նախահայրը եղել է «ArmOrfo»-ն, յետոյ՝ Armenian PowerSpell 2005-ը, իսկ լիարժէք տարբերակ դարձել է 2009-ին: Այն կարելի է համեմատել «RusOrfo» ծրագրի հետ: Այս ծրագրի առաջին տարբերակը հէնց այդպէս էլ կոչւել է՝ «ArmOrfo»:

Ծրագիրը մինչ 2009թ-ը անօրինական տարածում է ունեցել, որը խոչընդոտել է ծրագրի լիարժէք զարգացմանը: Հեղինակային իրաւունքի մասին օրէնքի կիրառմամբ՝ այն կարողացաւ լիարժէք գործել:

Ծրագրի նոր լիցենզաւորւած տարբերակը վաճառքի մէջ է այս տարւայ Մարտի 1-ից: Մինչեւ այժմ բաժանորդների քանակը հասել է մօտ 300-ի: Այն առաւել գործածական է պետական հիմնարկներում: Ծրագրին բաժանորդագրւել է Կենտրոնական բանկը, Ֆինանսների նախարարութիւնը, դատարանները,



ըր, մասնաւոր հիմնարկները, հրատարակչութիւնները, նոտարական գրասենեակները, իրաւաբանական ընկերութիւններ եւ այլն:

Ծրագրին բաժանորդագրւելու գումարը տարեկան 9000 դրամ է: «Մենք սկզբում հաշւարկել էինք, որ ծրագիրը պէտք է արժէնայ 35 հազար դրամ, որովհետեւ ծախսերը, թիւ պահելն ու այդ հսկայական աշխատանքն այդքան էր կազմում, բայց յետոյ եկան այն եզրակացութեան, որ այն հասանելի չի լինի եւ որոշեցինք դարձնել տարեկան 9000 դրամ, որ հասանելի դառնայ բոլորին», - պարզաբանեց Արմէն Բոշեանը:


Ծրագրի ապօրինի շահագործման դէպքում ընկերութիւնը զգուշացնում է, սակայն եթէ զգուշացումը դեր չունենայ, ընկերութիւնը կը դիմի դատարան եւ կը պահանջի 900 հազար տուգանք: «Փաստօրէն մեզ համար չարտօնագրւած օրինակը աւելի լաւ է ու ձեռնտու, քան արտօնագրւածը», - կատակում է ծրագրի հեղինակը եւ նշում, որ չարտօնագրւած տարբերակները գրեթէ ամէն տեղ օգտագործւում են:

Ապօրինի օգտագործման երկու դէպք արդէն գրանցւել են: Հնարաւոր է դատարանի միջոցով ծրագրի օգտագործումը դադարեցւի եւ օգտագործողները տուգանք վճարեն: Սակայն այդ երկու օգտագործողներն արդէն կապւել են ընկերութեան հետ եւ պատրաստականութիւն յայտնել գնել ծրագիրը:

Աղբիւր՝ «Հետք» կայք  
[www.hetq.am](http://www.hetq.am)

Վերատպում է «Հանդես գրականութեան եւ արւեստի» եռամսեայ թերթի համար 3-ից: Էջերի ձեւաւորումը պահել է համարեա նոյնութեամբ, Արմոնդ Այւազեանի յիշատակին, որը կեանքին հրաժեշտ տւեց մի քանի ամիս առաջ: Նա ձեւաւորել է «Հանդէս»-ի առաջին 10 համարները: Գլխագրի համար Արմոնդը օգտագործել է իր լուսանկարը:

**ԷՋԵՐ ՈՒՔԵՐԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ**



*Ուրերթ Ասրեան*



**Սեպտեմբեր 14**

Դարձեալ նայում եմ Արարատին: Չգիտեմ ով է ասել «Ահաւոր ու դաժան լեռ, որ ժպիտ չունի, ինչպէս մեր բախտը պատմական»: Իսկ ես սկսում եմ քրքջալ ու ծիծաղել ու մի այնպիսի խելայեղ ծիծաղով եմ վարակւում, որ շունչս սկսում է կտրուել: Վերջին անգամ այսպէս ծիծաղել եմ Համլետի հրաժեշտի պահին՝ դէպի հեռաւոր Գերմանիա: Նա չէր հասկանում, թէ ինչ է կատարւում ինձ հետ. ես փորձում էի տիրապետել ինձ, բայց չէր յաջողւում: Այսօրւայ ծիծաղս էլ պատահական չէ: Վստահ եմ Արարատը մի ինչ-որ տեղ է գնալու: Չգիտեմ ով է ասել, որ արարածներից միայն մարդն է կարող ծիծաղել, որովհետեւ նրանցից ոչ մէկը մարդու չափ չի տառապում:

**Սեպտեմբեր 16**

Այսօր կրկին աչքս Արարատին ընկնելով ծիծաղս պայթեց ու տւեց այնքան երկար, որ բժիշկ Ստեփանեանը բուժքոյրի հետ ներս մտան ու ինձ ինչ-որ բան սրսկեցին: Փորձում եմ նրանց բացատրել, որ ես մեղաւոր չեմ եւ Արարատը որոշել է ինչ-որ տեղ գնալ, բայց ծիծաղի պոռթկումը ինձ թոյլ չի տալիս բառ անգամ արտասանել: Տաս րոպէից ծիծաղս կտրւում է թմրեցուցիչի ազդեցութեան տակ: Յանկարծ մտածելով, որ Արարատը ընդմիշտ թողնելու է ինձ, կորցնում եմ համբերութիւնս եւ սկսում արտասել: Եւ այնքան եմ լացում, որ թրջւում է ամբողջ բարձս եւ չեմ յիշում, թէ երբ քնի մէջ ընկայ:



**Սեպտեմբեր 29**

Բարկութեանս սահման չկայ: Ուզում եմ խեղդել ամենքին եւ յետոյ ինձ: Ամէն ինչ աչքիս դաժան է թւում ու անարդար եւ ամէն մարդ ողորմելի ու ստոր: Սիրտս բաբախում է խելայեղօրէն ու ուզում եմ փշրել շուրջս գտնւող ամէն ինչ: Իսկ զայրոյթիս պատճառը... Ամաչում եմ ասել, քանի որ այնքան անհիմաստ է ու անարժէք, որ չեմ կարողանում հաւատալ, թէ այսպիսի ամեհի զարոյթը առաջացել է այդպիսի աննշան բանից, այսինքն չեմ ուզում հաւատալ. մեծ զայրոյթի համար մեծ շարժառիթներ եմ պէտք, թէ ոչ, ստորանում ես քո առջեւ եւ սկըտում ես զայրանալ ինքդ քեզ վրայ: Չեմ համբերում: Վերջապէս պէտք է մի բան անել: Վերջին անգամ գլուխս պատեպատ զարկելուց յետոյ, յարձակւեցի սենեակակցիս՝ Աշոտի վրայ եւ ատամներովս նրա ձեռքի միսը պոկեցի: Նա միայն ճչաց ցաւից եւ կանչեց բուժքոյրին: Այդ դէպքից յետոյ, մենակ եմ սենեակում. կարող եմ հայիոյել ինքս ինձ եւ ուզածս պահին



ճակատս զարկել պատին: Նրանց փոյթը չէ: «Պատը մնում է պատ, կը պակսի միայն մի լաւ ճակատ»: Իսկ հիմա ոչ մէկին լաւ ճակատ պէտք չէ:

### Հոկտեմբեր 18

Այսօր առաւօտեան կողքի սենեակում անձնասպանութիւն գործեց ակադեմիկոս Սասեհեանը: Երկու ամիս առաջ նրան մեզ մօտ բերեցին. շատ էինք հպարտանում, որ մեր մէջ ակադեմիկոս էլ ունենք: Չգիտես որտեղից էր նա մի կտոր ապակի գտել եւ կտրել ձեռքի երակները: Ոչ մէկի փոյթը չէ. միայն ես եմ տխուր, որովհետեւ այլեւս չենք կարող հպարտանալ մեր բաժնի ակադեմիկոսով: Բժիշկ Ստեփանեանը ամէն օր երկար ժամեր էր տրամադրում նրան, հէնց այդպէս, ինչպէս նախկինում ինձ էր ժամ տրամադրում: Դա ես գիտեմ բուժքոյր Յովհաննիսեանից, այն ամէն օր ինձ հետ խօսում է սիրալիր:

### Նոյեմբեր 2

Այսօր ինձ այցելութեան էր եկել կրտսեր եղբայրս: Նա շատ տխուր աչքեր ունի, այնքան տխուր, որ չես կարող կասկածել, որ հայ է: Գիտեմ նա վստահ է, որ ոչ մի յոյս չկայ իմ համար եւ ինձ կարգին խելագար է համարում: Զրուցում եմ նրա հետ, հրաւիրում նրան, որ գայ եւ ընդմիշտ տեղաւորւի իմ սենեակում: Կատարեալ դրախտ: Նրա համար մանրամասնօրէն պատմում եմ, թէ ինչպէս սպանեցի աշխատակիցներիցս չորսին եւ նրանց մարմինները կտոր-կտոր անելուց յետոյ ուղարկեցի ազգային թանգարան: Արտասուում է եւ համբուրում ճանկոտուած ու կոպտացած երեսս եւ ինձ մնաս բարով ասում: Խղճահարութիւնն է արթնանում իմ

մէջ: Նա պիտի գնայ եւ ապրի անգութ աշխարհում, իսկ ես իմ սենեակում կը լողամ գթութեան ծովում:

### Նոյեմբեր 5

Գլխիս մէջ դոփում եմ ձիերը, դոփում եմ, դոփում եմ, դոփում եմ անվերջ: Հանգիստ չունեն: Արդէն չորս օր ու գիշեր է, որ չեմ կարողանում քնել ու չգիտեմ, երբ կը վերջանայ ձիերի դոփիւնը: Կարողանում եմ հասկանալ Չարենցին, գիտեմ նա էլ ինձ լաւ կը հասկանայ:

Չարենցի Դանթեական առասպելը կարդում եմ որերորդ անգամ եւ ամէն անգամ ներշնչում եմ ինձ անհամար դիակները, որոնք այնպէս են յօշոտուած, որ

չգիտես որն է գլուխ ու որը մարմին: Չորս աշխատակիցներիս սպանելուց յետոյ խորապէս վերապրեցի Չարենցի բոլոր պոէմները, եւ ամէն անգամ կարդալով այն արթում եմ նրա հիասքանչ պատկերներով:

### Նոյեմբեր 17

Կտորած, Կտորած, Կտորած  
Քաղաքների մէջ եւ քաղաքներից դուրս...

Սպանւածների անվերջ շարանը ձգւում է մինչեւ հեռուներն ու ես փորձում եմ հաշել նրանց եւ ինձ պարզեւատրում եմ դիահամարակալման ասպետի շքանշանով: Յիշողութեանս խորքից ամէն օր դուրս եմ ժայթքում հազարաւոր դիակներ: Նրանք հայեր են, ինձ ծանօթ են բոլորը: Լուռ են ու նրանց տխուր աչքերը պատմում են չապրած տարիների քնքոյշ երազանքների մասին, բայց յանկարծ չարչարանքների ամեհի մի կծիկ թաւալւում է կոպերիս վրայ եւ միանգամայն անբողջ յիշողութիւններն ու նրանք անհետանում են:

### Մարտ 3

Չեմ ուզում մեզ փոխադրեն քաղաք: Բժիշկ Ստեփանեանը երէկ ասաց. «Դուք աւելի անվտանգ էք, քան դրսիները»: Արդէն չորս ամիս է, ինչ միայն օրը մէկ անգամ եմ մեզ կերակրում, բայց միեւնոյն է, բոլորը գոհ են: Հաւաքարար Թամազեանը ամէն օր վերցնում է իմ հացի կէսն ու ես նրան ժպտում եմ: Նրա աչքերը ապակուց են:


Վարսավիր Գեորգեանը այսօր ցոյց տւեց իր փոքրիկ թռռան նկարն ու ասաց, որ հայրը թողել է ընտանիքին եւ մայրն էլ թոքախտով է հիւանդ, եւ յետոյ արտասւեց: Ես կրկին ժպտում եմ նրան ու համբուրում թռռան նկարը: Նկարն առնում է ձեռքիցս ու սկսում կարճացնել մագերս:

### Մարտ 21

Արդէն մէկ շաբաթ է, որ սենեակիս դիմացի ծառին բոյն է դրել մի կռունկ: Այսօր հասկացայ, որ ոչ ոք չի նկատել նրան: Բուժքոյր Յովհաննիսեանն ու բժիշկ Ստեփանեանը մի պահ գլուխ բարձրացրին եւ անտարբեր նայելով կռունկին շարունակեցին սրսկել ինձ: Իսկ ես չեմ կարող հայեացքս կտրել կռունկից: Նա էլ շարունակ ինձ է նայում:

### Ապրիլ 1

Այսօր իմ ծննդեան օրն է: Այսօր բոլոր նրանց ծը-



նընդեան օրն է, որոնց հանդիպել են կեանքիս ընթացքում:

#### Ապրիլ 4

Հիւանդանոցի բակի աւազանի ձկները սկսել են բղաւել: Նրանց բղաւոցը խանգարում է քնել: Ականջներս փակում են լաթերով եւ յետոյ գլուխս թաղում բարձի մէջ: Բայց նրանց ձայնը ահաւոր է: Սենեակիս դիմացի կռունկը ձայնից խելագարւած ներս է մըտնում սենեակս ու պատեպատ զարկւում: Միայն այս հողի վրայ, ձկները գիտեն բղաւել եւ մարդիկ լուռ մնալ: Նրանք ամէն գիշեր լիզում են լուսնի երեսը, որը փռւում է աւազանի վրայ եւ յետոյ սկսում են բղաւել չգիտես ուրախութիւնից թէ զայրոյթից:

#### Մայիս 1

Ծուլութիւնից հարբած հաշւում են անձրեւի կաթիլները, անփոյթ խնամքով թրջում են ամէն ինչ:

#### Մայիս 4

Այսօր բժիշկ Ստեփանեանի դիակը աւազանում

գտան: Ասում են անձնասպանութիւն է գործել: Չգիտեմ ով է ասել, թէ կեանքն այնքան արժէք չունի, որ նրա պատճառով անձնասպան լինես: Գուցէ ինքս եմ ասել: Ասում են սիրահարւել է մի թիթեռի, իսկ երբ թիթեռը մերժել է նրա սէրը, նա չի համբերել եւ անձնասպան եղել: Ահա թէ ի՞նչ ահաւոր բաներ են այս թիթեռները. նրանցից պէտք է հեռու մնալ:

#### Մայիս 9

Հիւանդանոցը ուզում են յանձնել մի կօշկակարի եւ նա ուզում է մեր մաշկից կօշիկներ կարել եւ արտահանել ողջ աշխարհ: Ա՛խ ինչ մեծ երջանկութիւն՝ կօշիկ դառնալ ու շրջել ողջ աշխարհը:

#### Մայիս 11

Այսօր ես չեմ գրում: Այս բառերը գրում է Քուչակը: Կռիւ է ծագում իմ մէջ: Ռափայէլ Պատկանեանը յաւակնում է, որ նա է գրում իմ մէջ, իսկ ես հաստատ չգիտեմ, թէ ով է գրում: Անձամբ մտածում եմ, որ իմ մէջ գրում է Մարշալ Բաղդամեանը:

Երեւան 1996 կամ 1969





# ՓԱՓ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅ ՄԱՅՔԸԸ ԶԱՔՍՈՆԸ ՄԱՀԱՅԱԲ 1958-2009

**Ա**մեն մարդ ճանաչում է Մայքըլ Ջաքսոնին: Նա մեր ժամանակների կարեւորագոյն երգիչ-պարող-երաժշտագետն էր:

ղակի: Մայքըլ Ջաքսոնի *Black or White* (Սեւ թե սպիտակ) եւ *Scream* (Ճիչը) տեսահոլովակները այդ ժանրի անմոռանալի գործեր են: Նրա *Թրիլեր* ալբոմից մինչ այժմ վաճառւել է 60-65

Ջաքսոնը վախճանւելուց առաջ, նախապատրաստում էր համերգների ունենալ Լոնդոնում:

Ջաքսոնը կեանքին հրաժեշտ տւեց Յունիսի 25-ին, Լոս Անջելեսում: Նրա ծանօթներն ու բարեկամներն այսօր խօսում են նրա առեղծածային անհատականութեան մասին: Ովքեր առիթ են ունեցել անձամբ հանդիպել նրան, պատմում են, թէ նա իր անձնական յարաբերութիւններում անաչկոտ եւ մեղմ էր, ինչը խիստ հակասում է բեմի վրայ նրա փոթորկոտ ու անվերապահ ներկայութեանը:



Յատկապէս անցեալ դարի ութսունական եւ իննսունական թւականներին նրա հսկայական ազդեցութիւնը այդ տասնամեակներում իրենց պատանեկութիւնն ապրող տղաների ու աղջիկների վրայ անժխտելի է: Նա իր հինգ կարեւորագոյն ալբոմներով՝ *Off the Wall* (1979), *Thriller* (1982), *Bad* (1987), *Dangerous* (1991) and *HIStory* (1995) դարձաւ ժամանակակից մշակոյթը ձեւաւորող կարեւորագոյն ձայներից մէկը: Նա առաջիններից էր, որ ութսունականներին, նոր հիմնադրւած MTV հեռուստատեսութեան հետ սերտ համագործակցութեամբ, «վիդէո քլիպ»-ը (տեսահոլովակը) վեր քաշեց արւեստի մակար-

միլիոն օրինակ եւ այն համարում է բոլոր ժամանակների ամենաշատ վաճառւած ալբոմը: Մայքըլ Ջաքսոնը երգել սկսեց վաղ հասակից, երբ 11 տարեկան տղայ էր եւ մասնակցում էր իր եղբայրների կազմած «Ջաքսոն ֆայւ» նւագախմբին: Նա կը յիշէ իր հիանալի երգերով, երաժշտութեամբ եւ իր յօրինած նոր պարային շարժումներով: Սակայն նա միաժամանակ մեծ գործարար ու բարերար էր: Միշտ լրատւական միջոցների ուշադրութեան կենտրոնում էր, ոչ միայն իր արւեստի, այլ նաեւ իր անձնական կեանքի սկանդալների եւ իր տարօրինակ կեանքի ու բնաւորութիւնների համար: Նա անգամներ

վիրահատութիւններ կատարեց իր մարմնի վրայ, իր մաշկի գոյնը սեւից փոխեց սպիտակի, իսկ կեանքի վերջին տարիներում քիթը համարեայ ոչնչացել էր: Մայքըլ







# ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Հին, շատ հին ժամանակներից սկսած այդ փոքրիկ ու ժրաջան թռչող միջատները գրաւել են մարդկանց ուշադրութիւնը իրենց կատարած հրաշագործութեան համար այն աստիճան, որ նրանց համարել են մինչեւիսկ գերբնական ուժի եւ հզօրութեան տէր արարածներ, քանի որ իրօք, նրանց աշխատանքի արդիւնքը փրկարար է, անգնահատելի, բուժիչ ու կենսարար:

Հետաքրքիր է իմանալ, որ մեղուն բարձրացնում է բոյսերի եւ պտղաբեր ծառերի բերքատուութիւնը եւ նոյնիսկ փրկում որոշ բուսատեսակներն՝ իսպառ վերանալու վտանգից: Ինչքան որ մեղուն նեկտար է հաւաքում, այնքան էլ բոյս է փոշոտում եւ նպաստում նրա խաչաձեւմանը:

Եթէ իմանաք, թէ ինչ աշխատանքի գնով է ձեռք բերւում մեղրը, այն ժամանակ միայն կըմբռնէք մեղունների գերբնական ուժն ու ժրաջանութիւնը:

Մէկ կիլոգրամ մեղր հաւաքելու համար մեղունները 10 միլիոն ծաղիկից նեկտար ու ծաղկափոշի են հաւաքում: Նրանք այդ հիւթը հաւաքելու համար կտրում-անցնում են երկար տարածութիւններ, աւելի քան հարիւրաւոր կիլոմետրեր:

Մեղունները մումիայի հեղինակներն են:

Նախկինում մեղունները մինչեւիսկ ստրատեգիական նշանակութիւն են ունեցել:

Մեղունները նաեւ պատերազմի դաշտի ռազմիկներ են: Հին ժամանակներում մարդիկ նրանց օգտագործել են մարտերի ժամանակ: աշակիրների արշաւանքների ժա-

մանակ Անգլիայի թագաւոր Ռիչարդ Առիւծասիրտը թուրքերի դէմ ծովային մարտեր մղելիս, մեղափեթակները նետել է տւել թշնամու գորքերի վրայ եւ յաղթող հանդիսացել:

### **Ինչպէ՞ս պահել մեղրը**

- Ապակեայ կամ կաւէ ամաններում պէտք է պահել մեղրը:

- Մեղրի ամանի մէջ չթողնել գդալ, դանակ եւ մետաղեայ իրեր. դրանից քայքայւում են մեղրի միջի եթերաիւղերը եւ մի շարք կարեւոր սպիտակուցներ:

- Մեղրը չդնել սուր հոտ ունեցող մթերքների կողքին:

- Այն չպէտք է պահել մետաղեայ կամ ցինկապատ ամանների մէջ:

- Մեղրը մուգ գոյն է ստանում, երբ այն պահւում է 37 աստիճան բարձր ջերմութեան մէջ, իսկ մինչեւ 40 աստիճան տաքացնելու դէպքում ցնդում են նրա մէջ եղած կարեւոր բաղադրութիւնները եւ ապա կորցնում իր բուժիչ յատկութիւնները:

- Շաքարակալած կամ այսպէս ասած՝ սառած մեղրը կարելի է հալեցնել տաք ջրի մէջ:

### **Ինչպէ՞ս ճանաչել անարատ մեղրը**

Մաքուր մեղրի ճանաչելը կարեւոր է եւ ամէն մարդ շահագործողւած է դրանում: Մեղրը ճանաչելու համար զանազան միջոցներ կան: Յատուկ սարքաւորումներով լաբորատորային քննութիւններ, եւ ժողովրդական պարզ ու հասարակ միջոցներով փորձեր, որոնք հնարաւորութիւն են տալիս որոշելու թէ որն է անարատ մեղրը: Ահա դրանցից մի քանիսը:

- Լուցկու գլխիկաւոր հատիկը թաթախել մեղրի մէջ եւ պահել միառժամանակ, եթէ նրա ծծմբային մասը մատների թեթեւ հպումով փշուրում է, նշանակում է մեղրն անարատ չէ:

- Մեղրի մէջ զցել մի կտոր չոր լաւաշ եւ թողնել միառժամանակ.

եթէ փափկեց, ուրեմն մաքուր մեղր չէ, իսկ եթէ լաւաշն աւելի չորացաւ, նշանակում է անարատ է այն:

- Մեղրի մէջ ընկղմել մի հատիկ շաքար, եթէ որոշ ժամանակ յետոյ այն հալեց նրա մէջ, կը նշանակի



մեղրը անարատ չէ:


- Եթէ շաքարած մեղրի հատիկները երկու մատների արանքում տրորելիս անմիջապէս հալի, դա ցոյց կը տայ, որ մեղրն անարատ է:

### **Ժողովրդական բժշկութիւն**

Ժողովրդական բժշկութեան մէջ մեղրը օգտագործւում է տարբեր նպատակներով: Այստեղ յիշատակում ենք ժողովրդական

բժշկութեան մէջ տարածւած մի քանի դեղատոմսեր:

- Ստամոքսի խրոնիկ բորբոքման (գաստրիտ) դէպքում 100 գրամ մեղրին պէտք է խառնել 100 գրամ հալիւ եւ օգտագործել 3 անգամ մէկական թէյի գդալի չափով:



- Թարախակալած վերքը բուժելու համար 1 ճաշի գդալ մեղրը խառնել ալիւրով, բլիթի ձեւ տալ քուկին եւ դնել վերքին:

- Կոկորդացաւի ժամանակ 1 բաժակ տաք կաթի մէջ լցնել 2 գդալ մեղր. լաւ խառնել եւ դանդաղ խմել:

- Սակաւարիւնութեան բուժման համար օգտակար է հնդկացորենի (սեւ ցորեն) մուգ ծաղիկներից ստացւած շագանակագոյն մեղրը:

- Փորկապութեան դէպքում առաւօտեան նախաճաշելուց առաջ 1 ճաշի գդալ մեղրը հարկաւոր է լուծել 1 բաժակ սառը ջրի մէջ եւ խմել փոքր կումերով:

- Ճաքճքւած շրթունքները բուժելու համար մեղր քսել, ապա թողնել 20 րոպէ եւ յետոյ միայն լիզել:

- Անքնութեան դէպքում լաւ միջոց է մեղրը. այն պէտք է լցնել թէյի մէջ, նրան աւելացնել լիմոնաջուր եւ խառնել:

- Ալերգիկ երեւոյթների դէպքում հակացուցած է:



# Ընթերցանութեան դժւարին ուղին

Թէեւ կարելի է ստոյգ տեղեկութիւններ ունենալ Իրանում հրատարակած գրքերի թիւ ու քանակի մասին, սակայն ընթերցանութեան վերաբերեալ մինչեւ այժմ ոչ մի լուրջ եւ հիմնական ուսումնասիրութիւն չի կատարել, հետեւաբար տարբեր կարծիքներ կան այս մասին: Ինչ որ պարզ է, գրքերի հրատարակման պարագային էլ պէտք է ասել, որ դրանցից շատերը դպրոցական կամ համալսարանական գրքեր են, որոնց տպագրութիւնը, հրատարակումն ու առք ու վաճառքը խօսում է գրքի ու ընթերցանութեան վերաբերեալ հանրութեան հետաքրքրւածութեան մասին:

Ուսումնական գրքեր գնելն ու դասագրքեր ընթերցելը բնականաբար կատարում է ինչ-որ ակադեմիական դիպլոմ ստանալու, եւ դրանով իսկ աւելի լաւ աշխատանք գտնելու, բարձր ռոճիկ ստանալու եւ բարեկեցիկ կեանք ապահովելու նպատակով, եւ ոչինչով կապ չունի հանրութեան հետաքրքրասիրութեան, գիտելիքների գարգացման կամ այսպէս կոչւած, ընթերցասիրութեան հետ:

Այսօր մեր երկրում ոչ միայն անհետաքրքիր է դարձել գիրքը,

այլեւ մամուլը՝ տպագրուող հարիւրաւոր օրաթերթերը, շաբաթաթերթերն ու ամսագրերը: Դրա խօսում վկան՝ երկրում հրատարակուող թերթերի տպաքանակն է:

Պաշտօնական տւեալների համաձայն, օրաթերթերի ընդհանուր տպաքանակը 2.5 միլիոնից չի անցնում, մինչդեռ շատ երկրներում այն գերազանցում է նշւած թւից տասնեակ անգամներ: Օրինակ, ճապոնիայում օրական մօտ 20 միլիոն տպաքանակով թերթ է հրատարակւում: Սա, ապացոյցն է այն բանի, որ Իրանում ժողովուրդը այլեւս չի զբաղւում ընթերցանութեամբ. գերադասում է առաւելապէս խօսել եւ հեռուստացոյց դիտել: Պատճառն ի՞նչ է: Ոմանք տնտեսական դժւարութիւններն են պատճառը համարում, ոմանք էլ դրան աւելացնում են առօրեայ հոգսերն ու մտահոգութիւնները: Նրանք ընդգծում են, թէ յարաճուն սղաճը առիթ չի տալիս գիրք կարդալ: Ըստ ոմանց, հեռուստացոյցը նոյն դերն է կատարում, ինչ որ գիրքը, այն էլ պատկերաւոր կերպով, առանց յաւելեալ ծախսերի ու վճարումների:

Մեր հայերիս մօտ էլ խնդիրը նոյնն է, դեռ աւելի վատ: Եթէ տեղացի ժողովուրդը չի սիրում գիրք

կամ թերթ կարդալ, եւ համեմատական չափերով քիչ են ընթերցողների թիւը, զոնէ մարդկանց մի որոշ մասը սիրում է գիրք առնել եւ նւիրել: Մի բան, որ վերջերս մեզ մօտ հազւադէպ երեւոյթ է դարձել:

Ծնողները եւս յաճախ, երբ առիթ է լինում որեւէ նւեր գնելու, առանց այլեւայլի եւ բացէիբաց արտայայտւում են, թէ՛ գիրքն ի՞նչ է, դա էլ եղաւ նւէ՞ր:

Չպէտք է զարմանալ, որ մեզ մօտ ընթերցանութիւնն ու ընթերցասիրութիւնը պակասում է: Նշելի է, որ այդ սէրը առաջ է գալիս ո՛չ թէ միայն դպրոցից, եթէ ոչ հէնց առաջին հերթին ընտանիքից: Երբ երեխան տեսնում է տանը իր ծնողները գիրք են կարդում, թերթ են ընթերցում եւ զաւակներին անգամ հաղորդակից դարձնում դրա բովանդակութեանը, մանկուց սկըսում է վարժել գրքին ու թերթին, հետաքրքրւել եւ սովորոյթ դարձնել, եւ այսպիսով հացի ու ջրի պէս հանապազօրեայ հոգու պահանջ է դառնում այն :

Դեռ չենք ասում, որ մեր ուսուցիչներն էլ քիչ են զբաղւում ընթերցանութեամբ:

Երեխաները ընտանիքից յետոյ ամէնից շատ ազդեցութիւն են

կրում դպրոցից, եւ երբեմն մինչեւիսկ աւելի շատ ուսուցիչներին, քան ծնողներին: Որեւէ ձեռով ձգտում են ընդօրինակել ուսուցիչներին: Յետեւաբար ուսուցիչները պարտականութիւն ունեն, կամայ թէ ականայ, լաւագոյն օրինակը հանդիսանալ երեխաների համար: Արդեօ՞ք մեր ուսուցիչները ազատ պահերին կամ դասամիջոցներին մտնու՞մ են դպրոցի գրադարանը, ո՛չ թէ ասենք ընթերցանութեան համար, այլ գոնէ տարբեր պատուակներով հէնց այդ հոգեղէն միջավայրում ներկայ լինելու, կամ օրինակ հանդիսանալու նպատակով:

Երբ երեխան տեսնի, որ իր ծնողը գիրք կամ թերթ է կարդում, իր ուսուցիչը գրադարան է այցելում տարբեր առիթներով, գիրք է փնտրում կամ թերթում եւ այլն, ինքը եւս ընդօրինակելով ու ազդելով, հետեւելու է նրա օրինակին եւ այդ սովորոյթը ներծծելու է նաեւ իր մէջ, եւ հետագայում այդ բանը դառնալու է մի տեսակ սովորոյթ, հաճելի ու օգտակար պահանջ:

Ինչ վերաբերում է գրադարաններին: Չմոռանանք, որ դպրոցական գրադարանները աշակերտութեան կողմնակի գիտելիքները զարգացնելու տեսակետից խոշոր նշանակութիւն ունեն. այլ կերպ ասած, գրադարանը դպրոցի ողնաշարն է համարում եւ անհրաժեշտ է յատուկ ուշադրութիւն դարձնել դրան: Դրա համար էլ հարկաւոր է եթէ ոչ մասնագէտ, գոնէ հետաքրքրասէր, գրասէր, բանիմաց, գրքի իրազեկ ու մանկավարժ ուսուցչի կարգել որպէս գրադարանավար, որպէսզի կարողանայ նպատակաուղղած կերպով աշակցել, ցուցնունք ու խորհուրդ տալ աշակերտին, այսինչ կամ այնինչ գիրքն ընտրելու եւ ընթերցելու, ըստ տարիքի եւ մտային կարողութեան ու պատրաստականութեան, հակառակ դէպքում, սպասուած արդիւնքները

չի ստացւի: Մի հանգամանք, որին յաճախ մեր դպրոցներում այնքան էլ ուշադրութիւն չի դարձում եւ մինչեւիսկ անօգուտ ու անիմաստ է համարում, եւ գրադարանավար է նշանակում ընդհանրապէս այն անձնաւորութիւնը, որ պակաս գործունակութիւն ու ձեռներեցութիւն ունի:

Պատկերը միեւնոյնն է երկրի մակարդակում: Համալսարանական գրադարաններում կատարած հետազոտութիւնները վկայում են, որ թէեւ դրանք միւս գրադարանների համեմատ աւելի բարենպաստ վիճակում են գտնուում, բայց օտար երկրների համեմատ, դեռ շատ խղճուկ վիճակ ունեն: Այդ գրադարանների վարիչների միայն 46.5 տոկոսն է, որ մասնագիտական կրթութիւն ունի, իսկ հանրային գրադարանների աշխատակազմի կամ պատասխա-



նատուների 49 տոկոսը դպրոցական ընթացաւարտ է: Պատկերն աւելի անմխիթար է մեզ մօտ: Իրականութեան մէջ իրանահայ գաղութում, եւ մասնաւորաբար Թեհրանի պէս մի մեծ համայնքում քանի՞ հանրային բանուկ գրադարան կայ իր պատշաճ գրադարանավարով, որը կանոնաւոր, անխափան, նպատակադրած աշխատում ու սպասարկում է ընթերցող հասարակութեանը: Դեռ չենք խօսում գրադարաններում եղած գրքերի որակի ու քանակի կամ դրանց վիճակի մասին:


Մեր օրերին գիրքը կամ մամուլը ընթերցողի ձեռքը դիրութեամբ հասցնելը եւս կարելոր խնդիր է, որին պէտք է ուշադրութիւն դարձնել եւ յարմար միջոցների դիմել եւ ճամփայ հարթել այդ ուղղութեամբ:

Չանձրոյթից խուսափելու համար, այստեղ չենք ուզում խօսել մեզ մօտ հրատարակուող գրքերի, մամուլի, դրանց տպաքանակի, բովանդակութեան, սպառման, տարածման եղանակի, գրական ֆոնդերի ու նրանց գործունեութեան եւ այլ հանգամանքների մասին, այն համոզումն ունենալով, որ պատեհ առիթը կունենանք դարձեալ կիսելու ընթերցողների հետ եւ խորհրդածելու այս խընդիրների շուրջ:

Յամենայն դէպս, ինչպէս նշեց, ճիշտ է, որ նոր զարգացած տեխնոլոգիան լայն հնարաւորութիւններ է ստեղծել մարդկանց մտահորիզոնն ընդլայնելու եւ բազմակողմանի տեղեկութիւններ փոխանցելու համար, բայց եւ այնպէս, չպէտք է մոռանալ, որ ընթերցանութիւնն ու ընթերցասիրութիւնը կարելոր գործօն է, որը նպաստում է սերունդների առողջ ու գիտակից դաստիարակութեանն ու մտաւոր զարգացմանը, եւ որն սկսում եւ հիմք է դրում ընտանիքից, դպրոցից ու միջավայրից:

# Տ ա ղ ա ն դ ա

## ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԻՐԱԿԵԱՆ տիեզերական կենսաբանության հիմնադիր



*Ծնել է 1907 թիւն, Յունարի 25-ին Աշտարակում: 1928 թիւն ընդունել է Երեւանի պետական համալսարան: Ապա Մոսկւա՝ ուսումը շարունակելու Տիմիրեազեւի անւան գիւղատնտեսական ակադեմիայում: Գիտական գործունեութեան ընթացքում նա զբաղւել է կենսաքիմիայի հիմնարար՝ նիւթափոխանակութեան, ենթաբջջային գոյացումների, ինչպէս եւ տեխնիկական կենսաքիմիայի բազմաբնոյթ հարցերով: Նա տիեզերական կենսաբանութեան եւ բժշկութեան հիմնադիրն ու կազմակերպիչն է :Դարձել է Միոիթեան եւ Չայաստանի ու արտասահմանեան շատ երկրների ԳԱ ակադեմիկոս եւ գիտական ընկերութիւնների անդամ: 1964 թ. ընտրւել է ԻԻՆԵՍԿՕ-ի 11-րդ շրջանի գլխաւոր քարտուղար, ինչպէս նաեւ Ասղազնացութեան միջազգային Ֆեդերացիայի կենսաստղագնացութեան կոմիտէի նախագահ, միջազգային աստղագնացութեան ակադեմիայի փոխնախագահ:*

*Իր կատարած մեծարժէք ծառայութիւնների համար Լուսնի մի մասը կոչւել է իր անունով:*

*Նա վախճանւել է 1966 թիւ Մարտի 6-ին:*

Տաղանդաշատ հայ ժողովուրդը, ինչպէս անցելում, այնպէս էլ մեր ժամանակներում գիտութեան ու մշակոյթի բնագաւառներում տուել է բազմաթիւ ականառու եւ ծանրակշիռ դէմքեր:

Այդպիսի համաշխարհային ճանաչում ունեցող դէմքերից է անւանի գիտնական եւ տիեզերական կենսաբանութեան հիմնադիր՝ Նորայր Սիսակեանը:

Պատանի հասակում զրկւել է ծնողներից եւ հետեւաբար կրել է բազմաթիւ զրկանքներ: Նրա մանկութեան եւ պատանեկութեան տարիները համընկել են հայ ժողովրդի ծանր տարիների հետ: Սակայն մեծ էր պատանու ուսման տենչը, եւ նա 1928 թիւն աւարտելով դպրոցը ընդունւում է Երեւանի պետական համալսարանը, ապա անցնում Մոսկւա եւ ուսումը շարունակում Տիմիրեազեւի անւան գիւղատնտեսական ակադեմիայում: 1935-ից արդէն իսկ Մոսկւայի համալսարանի պրոֆեսոր էր, իսկ 1942-66-ին լաբորա-

տորիայի վարիչ:

Նա իր գիտահետազօտական աշխատանքները կատարել է հետեւեալ հիմնական ուղղութիւններով՝ նիւթափոխանակութիւնը կենդանի օրգանիզմում, տեխնիկական կենսաքիմիա, ենթաբջջային կառուցւածքների ֆունկցիոնալ կենսաքիմիա եւ տիեզերական կենսաբանութիւն: Իր գիտական գործունեութեան առաջին տարիները նւիրել է բոյսերի կենսաքիմիայի եւ ֆիզիոլոգիայի մի շարք կարեւորագոյն, հիմնարար եւ գործնական խնդիրներին՝ շաքարանիւթերի նիւթափոխանակութեան օրինաչափութիւնների ուսումնասիրութեանը:

Ուսումնասիրելով ֆոսֆորի ազդեցութիւնը շաքարի ճակնդեղի նիւթափոխանակութեան վրայ, նրան յաջողւեց ապացուցել ֆոսֆորի կարեւոր դերը շաքարի կուտակման պրոցեսում, որը արդիական եւ կարեւոր նշանակութիւն ունէր գիւղատնտեսութեան

# Լ ո թ Ն ա յ ե թ

բնագալառում բոյսերի լիարժեք անցումն ապահովելու եւ ֆոսֆորական պարարտանիւթերի օգտագործման գործում:

Չետագայ տարիներին նա իր ուշադրութիւնը կենտրոնացրեց բոյսերի երաշտակայունութեան եւ ջրային ռեժիմի փոփոխման պայմաններում բոյսերի մէջ ընթացող կենսաքիմիական պրոցեսների վրայ: Շնորհիւ այդ հետազոտութիւնների, առաջին անգամ յայտնաբերեց մի շարք կարելոր օրինաչափութիւններ:

Սիսակեանը կարելոր հետազոտութիւններ է կատարել կենսական պրոցեսների պարբերականութեան հարցերին նւիրած, յատկապէս կենսակատալիզատորների ակտիւութեան փոփոխութեան պարբերականութիւնը օրգանիզմներում: Առաջին անգամ նա ցոյց տւեց, որ գոյութիւն ունեն կենսակատալիզատորների գործունէութեան սեզոնային ռիթմեր, որոնք պայմանաւորում են բոյսերի ֆիզիոլոգիական վիճակը:

Չետագայում նա ուշադրութիւն է դարձնում բոյսերի ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի խընդիրների ուսումնասիրութեանը: Եւ իրօք, նա համարում է նաեւ ենթաբջջային գոյացումների ֆունկցիոնալ կենսաքիմիայի ուղղութեան հիմնադիրը, որը հետագայում արագընթաց զարգացում ապրեց եւ դարձաւ կենսաբանութեան կարելորագոյն եւ հանգուցային բնագալառներից մէկը:

Ակադեմիկոս Սիսակեանը շարունակելով հետազոտութիւնները ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի բնագալառում, նրան յաջողեց առաջին անգամ յատնաբերել մի շարք կենսաքիմիական պրոցեսներ, որոնք հետագայում հիմնադիր ուղղութիւններ եղան կենսաքիմիայի բնագալառում:

Ն.Սիսակեանի ղեկավարութեամբ հիմնադրուեց մի կարելոր ուղղութիւն՝ ենթաբջջային կառուցւածքների ֆունկցիոնալ կենսաքիմիա (բիոչիմի), որի դերն ու նշանակութիւնը ընդհանուր կենսաբանութեան բնագալառում դժւար է գնահատել. այն այժմ էլ բուռն զարգացում է ապրում:

Նա մշտապէս զբաղւել է նաեւ տեխնիկական կենսաքիմիայով: Մեծ է նրա մասնակցութիւնը այգեգործութեան, հայրենական խաղողի, գինեգործութեան ու կոնեակի արդիւնաբերութեան գիտական հիմունքների մշակման գործում:

Շնորհիւ կենսաբանութեան բնագալառում ունե-

ցած խոր եւ բազմակողմանի գիտելիքների, ակադեմիկոս Սիսակեանին «տիեզերական դարաշրջանի» նախաշեմին յաջողեց լինել այն գիտնակաքննների առաջին շարքում, որոնց հիմնադրած հիմքերն ու ուղղութիւնները հետագայում նպաստեցին տիեզերագնացութեան զարգացմանը: Նա կարողացաւ կանխատեսել ընդհանուր կենսաբանութեան գիտական ու գործնական բժշկութեան զարգացման հեռանկարները, դրանց որոշիչ դերը մարդու կողմից տիեզերքի նւաճման գործում, եւ շնորհիւ իր արտակարգ գիտակազմակերպչական տաղանդի, նրան յաջողեց այդ աշխատանքների իրագործման մէջ ներգրաւել բազմաթիւ խոշոր եւ առաջատար գիտնականներ ու գիտահետազոտական կենտրոններ, որոնք աշխատում էին մարդու եւ կենդանիների ֆիզիոլոգիայի, գենետիկայի, մանրէաբանութեան, բուսաբանութեան, կենսաքիմիայի, մոլեքուլէար կենսաբանութեան, ռադիոլոգիայի եւ այլ բնագալառներում: Նրա նախածեռնութեամբ ստեղծուեցին նոր գիտահետազոտական կենտրոններ, ինչպէս նաեւ նոր ուղղութիւններ, որոնք հետագայում ապահովեցին մարդու թռիչքը տիեզերք եւ նպաստեցին տիեզերագնացութեան զարգացմանը:

Տիեզերագնացութեան բնագալառում նրա ծառայութիւնները գերազնահատելով, Լուսնի մի խառնարան անւանել է նրա անունով:

Բազմավաստակ ու անխոնջ, հանրահռչակ ու մեծամուն գիտնականը մի առիթով ասել է. «Չետագօտողն իրաւունք չունի հանգստանալու եւ ապրելու նախկինում ձեռք բերւած յաջողութիւններով, նա իւրաքանչիւր օր պէտք է լրացնի իր գիտելիքները ինչոր նոր բանով, սովորելով շրջապատից, գրքերից ու բնութիւնից», որը անմիջական ու դիպուկ պատկերացումն է իր նկարագրի ու խառնւածքի:

Նա պարգեւատրւել է բազմաթիւ շքանշաններով ու արժանացել շատ մրցանակների: Մեծ գիտնականի անունով դպրոցներ ու փողոցներ կան Երեւանում ու Աշտարակում: Իր կիսանդրին կանգնեցւած է ծննդավայր Աշտարակում:

Տաղանդաշատ գիտնականն ապրեց ընդամենը 59 տարի, անմնացորդ նւիրելով գիտութեանը, հայրենիքին ու ժողովրդին:

մանակ Անգլիայի թագաւոր Ռիչարդ Առիւծասիրտը թուրքերի դէմ ծովային նարտեր նդելիս, մեղափեթակները նետել է տւել թշնամու գորքերի վրայ եւ յաղթող հանդիսացել:

### **Ինչպէ՞ս պահել մեղրը**

- Ապակեայ կամ կաւե ամաններում պէտք է պահել մեղրը:

- Մեղրի ամանի մէջ չթողնել գդալ, դանակ եւ մետաղեայ իրեր. դրանից քայքայւում են մեղրի միջի եթերաիւղերը եւ մի շարք կարեւոր սպիտակուցներ:

- Մեղրը չդնել սուր հոտ ունեցող մթերքների կողքին:

- Այն չպէտք է պահել մետաղեայ կամ ցինկապատ ամանների մէջ:

- Մեղրը մուգ գոյն է ստանում, երբ այն պահւում է 37 աստիճան բարձր ջերմութեան մէջ, իսկ մինչեւ 40 աստիճան տաքացնելու դէպքում ցնդում են նրա մէջ եղած կարեւոր բաղադրութիւնները եւ ապա կորցնում իր բուժիչ յատկութիւնները:

- Շաքարակալած կամ այսպէս ասած՝ սառած մեղրը կարելի է հալեցնել տաք ջրի մէջ:

### **Ինչպէ՞ս ճանաչել անարատ մեղրը**

Մաքուր մեղրի ճանաչելը կարեւոր է եւ ամէն մարդ շահագործողուած է դրանում: Մեղրը ճանաչելու համար զանազան միջոցներ կան: Յատուկ սարքաւորումներով՝ լաբորատորային քննութիւններ, եւ ժողովրդական պարզ ու հասարակ միջոցներով փորձեր, որոնք հնարաւորութիւն են տալիս որոշելու թէ որն է անարատ մեղրը: Ահա դրանցից մի քանիսը:

- Լուցկու գլխիկաւոր հատիկը թաթախել մեղրի մէջ եւ պահել միառժամանակ, եթէ նրա ծծմբային մասը մատների թեթեւ հպումով փշուում է, նշանակում է մեղրն անարատ չէ:

- Մեղրի մէջ գցել մի կտոր չոր

լաւաշ եւ թողնել միառժամանակ. եթէ փափկեց, ուրեմն մաքուր մեղր չէ, իսկ եթէ լաւաշն աւելի չորացաւ, նշանակում է անարատ է այն:

- Մեղրի մէջ ընկղմել մի հատիկ շաքար, եթէ որոշ ժամանակ յետոյ



այն հալեց նրա մէջ, կը նշանակի մեղրը անարատ չէ:


- Եթէ շաքարած մեղրի հատիկները երկու մատների արանքում տրորելիս անմիջապէս հալի, դա ցոյց կը տայ, որ մեղրն անարատ է:

### **Ժողովրդական բժշկութիւն**

Ժողովրդական բժշկութեան մէջ մեղրը օգտագործւում է տարբեր նպատակներով: Այստեղ յի-

շատակում ենք ժողովրդական բժշկութեան մէջ տարածւած մի քանի դեղատոմսեր:

- Ստամոքսի խրոնիկ բորբոքման (գաստրիտ) դէպքում 100 գրամ մեղրին պէտք է խառնել 100 գրամ հալէ եւ օգտագործել 3 ան-



գամ մէկական թէյի գդալի չափով:

- Թարախակալած վերքը բուժելու համար 1 ճաշի գդալ մեղրը խառնել ալիւրով, բլիթի ձեւ տալ քտուկին եւ դնել վերքին:

- Կոկորդացաւի ժամանակ 1 բաժակ տաք կաթի մէջ լցնել 2 գդալ մեղր. լաւ խառնել եւ դանդաղ խմել:

- Սակաւարիւնութեան բուժման համար օգտակար է հնդկացորենի (սեւ ցորեն) մուգ ծաղիկներից ստացւած շագանակագոյն մեղրը:

- Փորկապութեան դէպքում առաւօտեան նախաճաշելուց առաջ 1 ճաշի գդալ մեղրը հարկաւոր է լուծել 1 բաժակ սառը ջրի մէջ եւ խմել փոքր կումերով:

- Ճաքճքւած շրթունքները բուժելու համար մեղր քսել, ապա թողնել 20 րոպէ եւ յետոյ միայն լիզել:

- Անքնութեան դէպքում լաւ միջոց է մեղրը. այն պէտք է լցնել թէյի մէջ, նրան աւելացնել լիմոնաջուր եւ խառնել:

- Ալերգիկ երեւոյթների դէպքում հակացուցած է:



# Ընթերցանութեան դժւարին ուղին

Թէեւ կարելի է ստոյգ տեղեկութիւններ ունենալ Իրանում հրատարակած գրքերի թիւ ու քանակի մասին, սակայն ընթերցանութեան վերաբերեալ մինչեւ այժմ ոչ մի լուրջ եւ հիմնական ուսումնասիրութիւն չի կատարել, հետեւաբար տարբեր կարծիքներ կան այս մասին: Ինչ որ պարզ է, գրքերի հրատարակման պարագային էլ պէտք է ասել, որ դրանցից շատերը դպրոցական կամ համալսարանական գրքեր են, որոնց տպագրութիւնը, հրատարակումն ու առք ու վաճառքը խօսում է գրքի ու ընթերցանութեան վերաբերեալ հանրութեան հետաքրքրւածութեան մասին:

Ուսումնական գրքեր գնելն ու դասագրքեր ընթերցելը բնականաբար կատարում է ինչ-որ ակադեմիական դիպլոմ ստանալու, եւ դրանով իսկ աւելի լաւ աշխատանք գտնելու, բարձր ռոճիկ ստանալու եւ բարեկեցիկ կեանք ապահովելու նպատակով, եւ ոչինչով կապ չունի հանրութեան հետաքրքրասիրութեան, գիտելիքների գարգացման կամ այսպէս կոչւած, ընթերցասիրութեան հետ:

Այսօր մեր երկրում ոչ միայն անհետաքրքիր է դարձել գիրքը,

այլեւ մամուլը՝ տպագրուող հարիւրաւոր օրաթերթերը, շաբաթաթերթերն ու ամսագրերը: Դրա խօսում վկան՝ երկրում հրատարակուող թերթերի տպաքանակն է:

Պաշտօնական տւեալների համաձայն, օրաթերթերի ընդհանուր տպաքանակը 2.5 միլիոնից չի անցնում, մինչդեռ շատ երկրներում այն գերազանցում է նշւած թիւի տասնեակ անգամներ: Օրինակ, ճապոնիայում օրական մօտ 20 միլիոն տպաքանակով թերթ է հրատարակւում: Սա, ապացոյցն է այն բանի, որ Իրանում ժողովուրդը այլեւս չի զբաղւում ընթերցանութեամբ. գերադասում է առաւելապէս խօսել եւ հեռուստացոյց դիտել: Պատճառն ի՞նչ է: Ոմանք տնտեսական դժւարութիւններն են պատճառը համարում, ոմանք էլ դրան աւելացնում են առօրեայ հոգսերն ու մտահոգութիւնները: Նրանք ընդգծում են, թէ յարաճուն սղաճը առիթ չի տալիս գիրք կարդալ: Ըստ ոմանց, հեռուստացոյցը նոյն դերն է կատարում, ինչ որ գիրքը, այն էլ պատկերաւոր կերպով, առանց յաւելեալ ծախսերի ու վճարումների:

Մեր հայերիս մօտ էլ խնդիրը նոյնն է, դեռ աւելի վատ: Եթէ տեղացի ժողովուրդը չի սիրում գիրք

կան թերթ կարդալ, եւ համեմատական չափերով քիչ են ընթերցողների թիւը, զոնէ մարդկանց մի որոշ մասը սիրում է գիրք առնել եւ նւիրել: Մի բան, որ վերջերս մեզ մօտ հազւադէպ երեւոյթ է դարձել:

Ծնողները եւս յաճախ, երբ առիթ է լինում որեւէ նւեր գնելու, առանց այլեւայլի եւ բացէիբաց արտայայտւում են, թէ՛ գիրքն ի՞նչ է, դա էլ եղաւ նւէ՞ր:

Չպէտք է զարմանալ, որ մեզ մօտ ընթերցանութիւնն ու ընթերցասիրութիւնը պակասում է: Նշելի է, որ այդ սէրը առաջ է գալիս ո՛չ թէ միայն դպրոցից, եթէ ոչ հէնց առաջին հերթին ընտանիքից: Երբ երեխան տեսնում է տանը իր ծնողները գիրք են կարդում, թերթ են ընթերցում եւ զաւակներին անգամ հաղորդակից դարձնում դրա բովանդակութեանը, մանկուց սկըսում է վարժել գրքին ու թերթին, հետաքրքրւել եւ սովորոյթ դարձնել, եւ այսպիսով հացի ու ջրի պէս հանապազօրեայ հոգու պահանջ է դառնում այն :

Դեռ չենք ասում, որ մեր ուսուցիչներն էլ քիչ են զբաղւում ընթերցանութեամբ:

Երեխաները ընտանիքից յետոյ ամէնից շատ ազդեցութիւն են



կրում դպրոցից, եւ երբեմն մինչեւիսկ աւելի շատ ուսուցիչներին, քան ծնողներին: Որեւէ ձեռով ձգտում են ընդօրինակել ուսուցիչներին: Հետեւաբար ուսուցիչները պարտականութիւն ունեն, կամայ թէ ականայ, լաւագոյն օրինակը հանդիսանալ երեխաների համար: Արդեօ՞ք մեր ուսուցիչները ազատ պահերին կան դասամիջոցներին մտնու՞մ են դպրոցի գրադարանը, ո՛չ թէ ասենք ընթերցանութեան համար, այլ գոնէ տարբեր պատուակներով հէնց այդ հոգեղէն միջավայրում ներկայ լինելու, կամ օրինակ հանդիսանալու նպատակով:

Երբ երեխան տեսնի, որ իր ծնողը գիրք կամ թերթ է կարդում, իր ուսուցիչը գրադարան է այցելում տարբեր առիթներով, գիրք է փնտրում կամ թերթում եւ այլն, ինքը եւս ընդօրինակելով ու ազդելով, հետեւելու է նրա օրինակին եւ այդ սովորոյթը ներծծելու է նաեւ իր մէջ, եւ հետագայում այդ բանը դառնալու է մի տեսակ սովորոյթ, հաճելի ու օգտակար պահանջ:

Ինչ վերաբերում է գրադարաններին: Չմոռանանք, որ դպրոցական գրադարանները աշակերտութեան կողմնակի գիտելիքները զարգացնելու տեսակետից խոշոր նշանակութիւն ունեն. այլ կերպ ասած, գրադարանը դպրոցի ողնաշարն է համարում եւ անհրաժեշտ է յատուկ ուշադրութիւն դարձնել դրան: Դրա համար էլ հարկաւոր է եթէ ոչ մասնագէտ, գոնէ հետաքրքրասէր, գրասէր, բանիմաց, գրքի իրազեկ ու մանկավարժ ուսուցչի կարգել որպէս գրադարանավար, որպէսզի կարողանայ նպատակաուղղած կերպով աջակցել, ցուցնունք ու խորհուրդ տալ աշակերտին, այսինչ կամ այնինչ գիրքն ընտրելու եւ ընթերցելու, ըստ տարիքի եւ մտային կարողութեան ու պատրաստականութեան, հակառակ դէպքում, սպասուած արդիւնքները

չի ստացւի: Մի հանգամանք, որին յաճախ մեր դպրոցներում այնքան էլ ուշադրութիւն չի դարձում եւ մինչեւիսկ անօգուտ ու անիմաստ է համարում, եւ գրադարանավար է նշանակում ընդհանրապէս այն անձնաւորութիւնը, որ պակաս գործունակութիւն ու ձեռներեցութիւն ունի:

Պատկերը միեւնոյնն է երկրի մակարդակում: Համալսարանական գրադարաններում կատարած հետազոտութիւնները վկայում են, որ թեւէ դրանք միւս գրադարանների համեմատ աւելի բարենպաստ վիճակում են գտնուում, բայց օտար երկրների համեմատ, դեռ շատ խղճուկ վիճակ ունեն: Այդ գրադարանների վարիչների միայն 46.5 տոկոսն է, որ մասնագիտական կրթութիւն ունի, իսկ հանրային գրադարանների աշխատակազմի կամ պատասխա-

նատուների 49 տոկոսը դպրոցական ընթացաւարտ է: Պատկերն աւելի անմխիթար է մեզ մօտ: Իրականութեան մէջ իրանահայ գաղութում, եւ մասնաւորաբար Թեհրանի պէս մի մեծ համայնքում քանի՞ հանրային բանուկ գրադարան կայ իր պատշաճ գրադարանավարով, որը կանոնաւոր, անխափան, նպատակադրած աշխատում ու սպասարկում է ընթերցող հասարակութեանը: Դեռ չենք խօսում գրադարաններում եղած գրքերի որակի ու քանակի կամ դրանց վիճակի մասին:

Մեր օրերին գիրքը կամ մամուլը ընթերցողի ձեռքը դիրութեամբ հասցնելը եւս կարելոր խնդիր է, որին պէտք է ուշադրութիւն դարձնել եւ յարմար միջոցների դիմել եւ ճամփայ հարթել այդ ուղղութեամբ:


Չանձրոյթից խուսափելու համար, այստեղ չենք ուզում խօսել մեզ մօտ հրատարակուող գրքերի, մամուլի, դրանց տպաքանակի, բովանդակութեան, սպառման, տարածման եղանակի, գրական ֆոնդերի ու նրանց գործունեութեան եւ այլ հանգամանքների մասին, այն համոզումն ունենալով, որ պատեհ առիթը կունենանք դարձեալ կիսելու ընթերցողների հետ եւ խորհրդածելու այս խընդիրների շուրջ:

Յամենայն դէպս, ինչպէս նշեց, ճիշտ է, որ նոր զարգացած տեխնոլոգիան լայն հնարաւորութիւններ է ստեղծել մարդկանց մտահորիզոնն ընդլայնելու եւ բազմակողմանի տեղեկութիւններ փոխանցելու համար, բայց եւ այնպէս, չպէտք է մոռանալ, որ ընթերցանութիւնն ու ընթերցասիրութիւնը կարելոր գործօն է, որը նպաստում է սերունդների առողջ ու գիտակից դաստիարակութեանն ու մտաւոր զարգացմանը, եւ որն սկսում եւ հիմք է դրում ընտանիքից, դպրոցից ու միջավայրից:



# Տ ա ղ ա ն դ ա

## ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԻՐԱԿԵԱՆ տիեզերական կենսաբանության հիմնադիր



*Ծնել է 1907 թ.ին, Յունարի 25-ին Աշտարակում:1928 թ.ին ընդունել է Երեւանի պետական համալսարան:Ապա Մոսկւա՝ ուսումը շարունակելու Տիմիրեազեւի անւան գիւղատնտեսական ակադեմիայում: Գիտական գործունեութեան ընթացքում նա զբաղւել է կենսաքիմիայի հիմնարար՝ նիւթափոխանակութեան, ենթաբջջային գոյացումների, ինչպէս եւ տեխնիկական կենսաքիմիայի բազմաբնոյթ հարցերով: Նա տիեզերական կենսաբանութեան եւ բժշկութեան հիմնադիրն ու կազմակերպիչն է :Դարձել է Միոիթեան եւ Հայաստանի ու արտասահմանեան շատ երկրների ԳԱ ակադեմիկոս եւ գիտական ընկերութիւնների անդամ: 1964 թ. ընտրւել է ԻԻՆԵՍԿՕ-ի 11-րդ շրջանի գլխաւոր քարտուղար, ինչպէս նաեւ Ասղազնացութեան միջազգային Ֆեդերացիայի կենսաստղագնացութեան կոմիտէի նախագահ, միջազգային աստղագնացութեան ակադեմիայի փոխնախագահ:*

*Իր կատարած մեծարժէք ծառայութիւնների համար Լուսնի մի մասը կոչւել է իր անունով:*

*Նա վախճանւել է 1966 թ.ի Մարտի 6-ին:*

Տաղանդաշատ հայ ժողովուրդը, ինչպէս անցելում, այնպէս էլ մեր ժամանակներում գիտութեան ու մշակոյթի բնագաւառներում տւել է բազմաթիւ ակադեմիկոս եւ ծանրակշիռ դէմքեր:

Այդպիսի համաշխարհային ճանաչում ունեցող դէմքերից է անւանի գիտնական եւ տիեզերական կենսաբանութեան հիմնադիր՝ Նորայր Սիւսկեանը:

Պատանի հասակում զրկւել է ծնողներից եւ հետեւաբար կրել է բազմաթիւ զրկանքներ: Նրա մանկութեան եւ պատանեկութեան տարիները համընկել են հայ ժողովրդի ծանր տարիների հետ: Սակայն մեծ էր պատանու ուսման տենչը, եւ նա 1928 թ.ին աւարտելով դպրոցը ընդունւում է Երեւանի պետական համալսարանը, ապա անցնում Մոսկւա եւ ուսումը շարունակում Տիմերեազեւի անւան գիւղատնտեսական ակադեմիայում: 1935-ից արդէն իսկ Մոսկւայի համալսարանի պրոֆեսոր էր, իսկ 1942-66-ին լաբորատորիայի վարիչ:

Նա իր գիտահետազօտական աշխատանքները կատարել է հետեւեալ հիմնական ուղղութիւններով՝ նիւթափոխանակութիւնը կենդանի օրգանիզմում, տեխնիկական կենսաքիմիա, ենթաբջջային կառուցւածքների ֆունկցիոնալ կենսաքիմիա եւ տիեզերական կենսաբանութիւն: Իր գիտական գործունեութեան առաջին տարիները նւիրել է բոյսերի կենսաքիմիայի եւ ֆիզիոլոգիայի մի շարք կարեւորագոյն, հիմնարար եւ գործնական խնդիրներին՝ շաքարանիւթերի նիւթափոխանակութեան օրինաչափութիւնների ուսումնասիրութեանը:

Ուսումնասիրելով ֆոսֆորի ազդեցութիւնը շաքարի ճակնդեղի նիւթափոխանակութեան վրայ, նրան յաջողւեց ապացուցել ֆոսֆորի կարեւոր դերը շաքարի կուտակման պրոցեսում, որը արդիական եւ կարեւոր նշանակութիւն ունէր գիւղատնտեսութեան

# Լ ո ը ը Ն ա յ ե ը

բնագաւառում բոյսերի լիարժէք անցումն ապահովելու եւ ֆոսֆորական պարարտանիւթերի օգտագործման գործում:

Հետագայ տարիներին նա իր ուշադրութիւնը կենտրոնացրեց բոյսերի երաշտակայունութեան եւ ջրային ռեժիմի փոփոխման պայմաններում բոյսերի մէջ ընթացող կենսաքիմիական պրոցեսների վրայ: Շնորհիւ այդ հետազոտութիւնների, առաջին անգամ յայտնաբերեց մի շարք կարելոր օրինաչափութիւններ:

Սիսակեանը կարելոր հետազոտութիւններ է կատարել կենսական պրոցեսների պարբերականութեան հարցերին ներկայում, յատկապէս կենսակատալիզատորների ակտիւութեան փոփոխութեան պարբերականութիւնը օրգանիզմներում: Առաջին անգամ նա ցոյց տուեց, որ գոյութիւն ունեն կենսակատալիզատորների գործունէութեան սեզոնային ռիթմեր, որոնք պայմանաւորում են բոյսերի ֆիզիոլոգիական վիճակը:

Հետագայում նա ուշադրութիւն է դարձնում բոյսերի ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի խընդիրների ուսումնասիրութեանը: Եւ իրօք, նա համարում է նաեւ ենթաբջջային գոյացումների ֆունկցիոնալ կենսաքիմիայի ուղղութեան հիմնադիրը, որը հետագայում արագընթաց զարգացում ապրեց եւ դարձաւ կենսաբանութեան կարելորագոյն եւ հանգուցային բնագաւառներից մէկը:

Ակադէմիկոս Սիսակեանը շարունակելով հետազոտութիւնները ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի բնագաւառում, նրան յաջողեց առաջին անգամ յատնաբերել մի շարք կենսաքիմիական պրոցեսներ, որոնք հետագայում հիմնադիր ուղղութիւններ եղան կենսաքիմիայի բնագաւառում:

Ն.Սիսակեանի ղեկավարութեամբ հիմնադրուեց մի կարելոր ուղղութիւն՝ ենթաբջջային կառուցածքների ֆունկցիոնալ կենսաքիմիա (բիոչիմի), որի դերն ու նշանակութիւնը ընդհանուր կենսաբանութեան բնագաւառում դժար է գնահատել. այն այժմ էլ բուռն զարգացում է ապրում:

Նա մշտապէս զբաղւել է նաեւ տեխնիկական կենսաքիմիայով: Մեծ է նրա մասնակցութիւնը այգեգործութեան, հայրենական խաղողի, գինեգործութեան ու կոնեակի արդիւնաբերութեան գիտական հիմունքների մշակման գործում:

Շնորհիւ կենսաբանութեան բնագաւառում ունե-

ցած խոր եւ բազմակողմանի գիտելիքների, ակադէմիկոս Սիսակեանին «տիեզերական դարաշրջանի» նախաշեմին յաջողեց լինել այն գիտնակաքննների առաջին շարքում, որոնց հիմնադրած հիմքերն ու ուղղութիւնները հետագայում նպաստեցին տիեզերագնացութեան զարգացմանը: Նա կարողացաւ կանխատեսել ընդհանուր կենսաբանութեան գիտական ու գործնական բժշկութեան զարգացման հեռանկարները, դրանց որոշիչ դերը մարդու կողմից տիեզերքի մաճման գործում, եւ շնորհիւ իր արտակարգ գիտակազմակերպչական տաղանդի, նրան յաջողեց այդ աշխատանքների իրագործման մէջ ներգրաւել բազմաթիւ խոշոր եւ առաջատար գիտնականներ ու գիտահետազոտական կենտրոններ, որոնք աշխատում էին մարդու եւ կենդանիների ֆիզիոլոգիայի, գենետիկայի, մանրէաբանութեան, բուսաբանութեան, կենսաքիմիայի, մոլեքուլէար կենսաբանութեան, ռադիոլոգիայի եւ այլ բնագաւառներում: Նրա նախածեռնութեամբ ստեղծուեցին նոր գիտահետազոտական կենտրոններ, ինչպէս նաեւ նոր ուղղութիւններ, որոնք հետագայում ապահովեցին մարդու թռիչքը տիեզերք եւ նպաստեցին տիեզերագնացութեան զարգացմանը:

Տիեզերագնացութեան բնագաւառում նրա ծառայութիւնները գերազնահատելով, Լուսնի մի խառնարան անւանել է նրա անունով:

Բազմավաստակ ու անխոնջ, հանրահռչակ ու մեծամուն գիտնականը մի առիթով ասել է. «Հետազոտողն իրաւունք չունի հանգստանալու եւ ապրելու նախկինում ձեռք բերած յաջողութիւններով, նա իրաքանչիւր օր պէտք է լրացնի իր գիտելիքները ինչոր նոր բանով, սովորելով շրջապատից, գրքերից ու բնութիւնից», որը անմիջական ու դիպուկ պատկերացումն է իր նկարագրի ու խառնւածքի:

Նա պարգեւատրուել է բազմաթիւ շքանշաններով ու արժանացել շատ մրցանակների: Մեծ գիտնականի անունով դպրոցներ ու փողոցներ կան Երեւանում ու Աշտարակում: Իր կիսանդրին կանգնեցւած է ծննդավայր Աշտարակում:

Տաղանդաշատ գիտնականն ապրեց ընդամենը 59 տարի, անմնացորդ նկրուելով գիտութեանը, հայրենիքին ու ժողովրդին:



## ՂՈՔԻ՝ ՆՊԱՏԱԿԸ 2014-Ի ԱՇԽԱՐՀԻ ՉԱԿԱԹՆ Է

դիմաց 2 յաղթանակ արձանագրել, Հիւսիսային եւ Հարաւային Կորեաների հետ հաշիւը հաւասարեցնել, եւ միայն Չինաստանի դէմ պարտութիւն կրեց:

Ղոթբիի՝ մի կարճ ժամանակահատուածում որպէս հաւաքականի ազգային մարզիչ հանդէս գալու կարելորութիւնն այն է, որ թէպէտ ազգ. հաւաքականը տակտիկական առաջխաղաց ունեցաւ, սակայն նա իր հիմնական նպատակին չհասաւ եւ չկարողացաւ բարձրանալ աշխարհի գաւաթին:

Նա մամլոյ մի ասուլիսում իր պայմանագրի վերանորոգման մասին ասաց. «Այս պայմանագիրը կնքւել է 2011 թւի ասիական ազգերի գաւաթի մրցութիւններում առաջնութեան ձեռքբերման նախապայմանով»: Ըստ երեւոյթին, այս առաջնահերթութիւնը պայմանաւորաւորութիւն է առաջ բերում Ղոթբիի համար եւ իրականում այն երկամեայ համաձայնութիւն է յաջողութեան դէպքում:

Նա այդ ասուլիսում անգամներ անդրադարձաւ Կորեայի ֆուտբոլի յաջողութեան ու վերելքի պատճառներին եւ ակնարկեց, թէ բարեփոխելու է ազգային հաւաքականի խաղացողների սերունդը:

**Ի**րանի ֆուտբոլի ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ Աֆշին Ղոթբին աշխատանքային փորձառութեան նոր տիտղոսի արժանացաւ: Նա առաջին իրանցի գլխավոր մարզիչն է, որ պարտութիւն կրելուց եւ անյաջողութեան մատնելուց յետոյ իր

պայմանագիրը վերանորոգել է ֆուտբոլի Ֆեդերացիայի հետ: Նա, որ մէկ եւ կէս տարի Պերսեպոլիսում մարզումներ տալուց յետոյ Իրանի ազգային հաւաքականը ղեկավարեց 5 պաշտօնական եւ 2 ընկերական խաղերում, կարողացաւ Ինդոնեզիայի եւ Արաբական Միացեալ Եմիրութիւնների

## ԱՆԳՐԱՆԻԿ ԹԵՅՄՈՒՐԵԱՆ՝

Եւրոպական նշանաւոր լիգաներին մասնակցելը կապած է երկրի ազգային հաւաքականում խաղացողի անդամակցութեանը: Միւս կողմից էլ Աշխարհի գաւաթի խաղերին մասնակցելը, իր հերթին նպաստում եւ հեշտացնում է խաղացողների փոխադրութեան գործը: Մի շնորհիւ, որը ձեռքից տուցին Իրանի ազգ. հաւաքականի անդամները:

Անդրանիկ Թէյմուրեանն էլ շատ է ափսոսում այդ առիթը բաց

թողնելու համար: Նա ասում է. «Աշխարհի գաւաթի մրցաշարից Իրանի ազգ. հաւաքականի դուրս մնալը միանշանակ վնասեց Իրանի ընդհանուր ֆուտբոլին: Որպէս մի խաղացող մեծ յոյսեր էի փայփայում ազգ. հաւաքականի Աշխարհի գաւաթի խաղերի մասնակցութեան համար եւ Կորեայի հետ յօգուտ ոչ ոքի խաղալուց յետոյ հէնց այս մարզադաշտում ես լաց եղայ: Ազգային հաւաքականը Աշխարհի գաւաթի խաղերին

չմասնակցելով Իրանի ֆուտբոլը ամբողջապէս վնասեց: Բայց ֆուտբոլի գրաւչութիւնն էլ հէնց կայանում է դրա մէջ»:

Թէյմուրեանը, ի պատասխան այն հարցման, թէ այս անյաջողութիւնն ու՞մ կարելի է վերագրել, ասաց. «...չեմ ուզում որեւէ մէկին մեղաւոր ներկայացնել, բայց պիտի ասել, որ մենք մեր տնային միջերը հեշտութեամբ ձեռքից տուցինք եւ դժբախտաբար, դրսի խաղերում էլ բախտներս չբերեց,

# ՂԱՐՉԻՆԵԱՆԸ ՁԵՌՆՈՅ ՆԵՏԵՅ ԱԳՔԵԿՈՅԻՆ

Ամենաթեթև քաշային կարգի աշխարհի բացարձակ չեմպիոն Վախթանգ Դարչինեանը սկսում է պատրաստել ժողՖ Ագբեկոյի հետ Յուլիսի 11-ին կայանալիք մենամարտին: Այդ մրցամարտում վիճարկելու է IBF-ի վարկածով թեթև քաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Եթե 33-ամեայ Վախթանգին յաջողի յաղթել գանացի բռնցքամարտիկին, ապա Ջեֆ Ֆենեկից յետոյ կը դառնայ Աստրալիան ներկայացնող 2-րդ մարզիկը, որը քաշային 3 կարգերում կը նւաճի ուժեղագոյնի տիտղոսը:

Իր մրցակցի մասին Դարչինեանը հետեւեալ կարծիքն է յայտնել. «Ագբեկոն վատ բռնցկամարտիկ չէ, բոլորն էլ ասում են, որ նա տիրապետում է լաւ հարւածների: Բոլորը կը տեսնեն, որ ես աւելի ուժեղ ու արագաշարժ եմ: Կապացուցեմ բոլորին, որ իմ համար քաշային նոր կարգում հարւածներս աւելի ուժգին կը լինեն»:

Չայ բռնցքամարտիկը արդէն իսկ մեկնել է ԱՄՆ, ուր ժամանելուց յետոյ մի հարցազրոյցի ընթացքին նշել է, թէ չնայած կլիմայական փոփոխութիւններին ինքը շուտ կը յարմարի պայմաններին: «Իմ մարզումները հիանալի են անցում: Յունիսի 10-ից սկսել եմ սպարինգ մենամարտերը: Մարզում եմ տքնաջան եւ ֆիզիկապէս աւելի ուժեղ եմ լինելու, քան իմ վերջին մենամարտի ժամանակ»:

Նա սնուում է մասնաւոր սննդակարգով, որի մէջ հիմնականում ներառւած են ձկնեղէն, անիւղ միս եւ ապուրներ: Աստրալիայում Դարչինեանը առաւել ուշադրութիւն է դարձրել ուժային վարժանքներին եւ ծանրութիւններ բարձրացնելուն: Իսկ վերջին շրջանում շեշտը դրել է սպարինգ մենամարտերի եւ դիմացկունութեան բարձրացման վրայ:

Թէև Դարչինեանն իր ողջ ուշադրութիւնը կենտրոնացրել է Ագբեկոյի հետ մենամարտի նախապատրաստմանը, սակայն աստրալիական «Բրիգեյն Թայմզ» թերթին տւած հարցազրուցում նա նշել է, որ երազում է մենամարտել ֆիլիպինցի հանրայայտ բռնցքամարտիկ Սենի Պակիտայի հետ: Ճիշտ է, երկու բռնցքամարտիկները հանդէս են գալիս քաշային տարբեր կարգերում, սակայն Դարչինեանի կարծիքով Սենի Պակիտայն ցանկութեան դէպքում կարող է 2-3 քաշային կարգ իջնել եւ հանդիպել իր հետ: «Երազում եմ Սենի Պակիտայի հետ մենամարտել: Չէի ասի, թէ նրան նուկաուտի կենթարկեմ: Ցանկանում եմ մենամարտել նրա հետ եւ ապացուցել, որ Պակիտայի համար բաւական ուժեղ մրցակից եմ: Մինչեւ նրա հետ մենամարտելը, ինձ անհրաժեշտ կը լինի յաղթել մի քանի բռնցքամարտիկների, որպէսզի ապացուցեմ, որ պատրաստ եմ Պակիտայի հետ մրցաւէճին: Չեմ կարծում, թէ կարող եմ առաջին կիսամիջին քաշայինին համապատասխան քաշ ունենալ, սակայն հնարաւոր է հասնել առաջին թեթև քաշին եւ նրան մարտահրաւեր նետել: Նրա մարտածը ինձ հոգեհարազատ է», - յայտարարել է Դարչինեանը:

Ֆիլիպինցի Սենի Պակիտայն 30 տարեկան է: Պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 49 մրցամարտում նա յաղթել է 37-ը տեխնիկական նուկաուտով, 2-ը աւարտել է ոչ-ոքի, 3-ում պարտւել է: Ի դէպ, «Ռինգ» ամսագիրը Սենի Պակիտային ճանաչել է ընթացիկ 10-ամեակի (2000-2010) աշխարհի ուժեղագոյն բռնցքամարտիկ:

## ՇԱՏ ՆԻՇԵՐ ԿՈՐՅՐԻՆՔ

որով եւ չկարողացանք բարձրանալ վեր»:

Ազգային հաւաքականի կիսապաշտպանն այնուհետեւ նշեց. «Ըստ իս, Իրանի ազգային հաւաքականը այս վերջին 3 խաղերի ժամանակ կարողացաւ իրեն լաւ դրսեւորել եւ թիմի տեխնիկ անձնակազմը՝ հակառակ ունեցած իր կարճ ժամանակամիջոցին, կարողացաւ ըստ արժանւոյն համատեղել եւ համախմբել ազգ. հաւաքականը: Երեք մնացած խաղերից

հինգ միշ ձեռք բերելը, որոնցից երկուսն էլ տնից դուրս խաղեր էին, ցոյց է տալիս, որ բարեյաջող իրավիճակ է տիրում:

Աֆշին Ղոթթին ծանր պարտականութիւն էր կրում եւ կարողացաւ պայմանները բարենպաստ դարձնել: Ես այն կարծիքի եմ, որ ազգային հաւաքականը միայն մի դիպածով չկարողացաւ Աշխարհի գաւաթին մասնակցելու իրաւունքը նւաճել, եւ դա էլ Փարք Ջի Սունգի գոլն էր»:



# ԿՈՆՖԵՐԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԳԱԿԱԹ

## Իսպանիա 2, Հարավային Աֆրիկա 0



սարդ աստղ Սերգեյ Բասկեցի գընդակին տիրացաւ Դաւիթ Վիան, որը ոտքի կողքով վարպետօրէն հարածեց գնդակին, եւ գնդակը յայտնւեց հակառակորդի դարպասում:

Առաջին գոլի նշանակումը խթան հանդիսացաւ, որպէսզի Յ. Աֆրիկայի ֆուտբոլիստները առաջ մղւեն եւ կատաղի գրոհներ կազմակերպեն Բարսելոնայի դարպասի վրայ: Եւ այսպէս, Սիբրնիգօ Գակսային յաջողեց կիսադաշտից մի քանի դիպուկ ու վտանգաւոր գնդակներ ուղարկել Բարսելոնայի դարպասի վրայ, սակայն արդիւնք չտուեց:

աղի ակարտին 20 րոպէ մնացած՝ կանգառային մի հարածով գնդակն ուղարկեց հագիւ խաղադաշտ մտած Ֆերնանդօ Ջորընթին, որը մօտ տարածութիւնից գնդակը սահեցրեց Յ. Աֆրի-

**Ի**սպանացիները յաջորդաբար 15 յաղթանակներ ձեռք բերելով կարողացան մուտք գործել յաջորդ փուլ, եւ այսպիսով մի նոր մրցամիջ արձանագրել այս բնագաւառում: Հիւրընկալող խումբը այս հանդիպմանը պարտութիւն կրելով հանդերձ, անցաւ յաջորդ փուլ:

Իսպանիան խաղն սկսեց միանգամայն ագրեսիւ կերպով եւ խաղի առաջին 5 րոպէներին մինչեւիսկ մէկ անգամ թոյլ չտուեց գընդակը գտնւի հակառակորդի ձեռքում: Հետզհետէ խաղն իր նորմալ ռիթմն ստացաւ: Առաջին խաղակէսին որեւէ արտառոց բան տեղի չունեցաւ եւ երկու դարպասներն էլ մնացին անխոցելի:

Իսպանիային չէր յաջողուում յարմար առիթներ ստեղծել, իսկ Հարավային Աֆրիկան էլ չէր կարողանում տիրապետել գնդակին:

Երկրորդ խաղակէսի սկզբին Իսպանիան հիանալի առիթ ունեցաւ գերազանց գոլի հասնելու, որովհետեւ Արոն Մոկոնեման տուգանային գօտում խաղի կանոնների կոպիտ խախտում կատարեց Ֆաբերգասի վրայ, որի պատճառով մրցավարը 11 մետրանոց ազդարարեց յօգուտ Իսպանիայի. սակայն հարածը յաջող չիրականացրեց Դաւիթ Վիան եւ գնդակը ուղիղ տեղադրեց Յ. Աֆրիկայի դարպասապահ Իւնենի ձեռքերի մէջ, վերջինս էլ առանց դժարութեան զսպեց գնդակը, իսկ Ֆերնանդօ Թորեսի անդրադարձ գընդակի հարածը եւս գոլ չէղաւ:

Բայց տուգանային հարածը կասեցնելու բերկրանքով տարած Հարավային Աֆրիկայի ֆուտբոլիստների եւ նրանց երկրպագուների խանդավառութիւնն էլ երկար չտուեց: Դարպասի վրայ ուղարկած Բարսելոնայի երիտա-



կայի դարպասը եւ հաշիւը դարձրեց 2:0: Հակառակորդ թիմը դարձեալ բազմիցս գրոհների դիմեց, սակայն առանց վերջնական արդիւնքի: Իսկ քանի որ լուրը հասաւ, թէ Նոր Զելանդիայի ու Իրաքի խաղը ակարտուել է յօգուտ ոչ ոքի, ուստի կրքերը հանդարտեցին եւ առանց լուրջ վրդովմունքի վերջ գտաւ խաղը եւ հակառակ պարտութիւն կրելուն, Հարավային Աֆրիկան եւս անցաւ կիսաեզրափակիչ փուլ:

**فهرست مطالب این شماره**

۲	خبرهای جامعه آرامته ایران
۴	بعد از انتخابات
۶	روزنامه آزادک بیروت درباره وقایع ایران
۸	ارمنستان: تنفس تابستانی
۱۰	گایانه آبراهامیان کولیا در هوانسیان فوروم
۱۳	گریست هوویان برنده جایزه جشنواره کاریکاتور ماروستیکا
۱۶	مصاحبه با آندرانیک خچومیان شاکه پطروسیان
۱۹	برنامه کامپیوتری تصحیح املا زبان ارمنی
۲۰	صفحاتی از یادداشت‌های روزانه روبرت پطروسیان روبرت آسریان
۲۳	درگذشت مایکل جکسون
۲۴	زنبورهای معجزه‌گر
۲۶	راه دشوار کتابخوانی
۲۸	نورایر میساکیان: بنیانگذار زیست‌شناسی فضایی
۳۰	ورزش
۳۴	سرگرمی

**دوهفته‌نامه  
اجتماعی فرهنگی  
هوویس**

شماره ۵۳، ۱۰ تیر ۱۳۸۸



ماروستیکا

صاحب امتیاز و مدیر مسئول: لئون آهارونیان  
 دبیر تحریریه: روبرت صافاریان  
 شورای نویسندگان:  
 کارمن آذربان، لیا خاچکیان،  
 آندرانیک خچومیان، گارون سرگیسیان، آندرانیک سیمونیان،  
 ونه پطروسیان، کولیا در هوانسیان  
 مدیر هنری: لیا خاچکیان  
 مسئول امور بازرگانی: آگس آذربان  
 تهران، خیابان انقلاب، بین ولی عصر و فلسطین، شماره ۱۰۲۸  
 تلفن: ۶۶۴۹۵۱۸۰  
 تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸  
 hoovs@inbox.com

**Տնօրէն : Խաչիկ Քէշիշ**  
 ارائه کلیه خدمات بیمه ای  
**Tel : 77 84 30 25 - 77 82 39 86**  
**Fax : 77 84 30 27**



**بیسه ناسیا**  
 کد نمایندگی: ۰۷۱۶  
 آدرس: تهران، خیابان دماوند، ایستگاه پل مسیل  
 داود گلشن دوست (باختر)، کوچه پنجم،  
 پلاک ۵۴ کد پستی: ۱۶۴۵۹-۱۶۸۵۱

**VETERINARY CLINIC**  
**Dr.N.Sang**  
 Vet.C.No:2061

**کلینیک دامپزشکی**  
 دکتر نصیر سنگ  
 شماره نظام دامپزشکی ۲۰۶۱

**Դ-ոկտոր Նասիր Սանգ**  
**Անասնաբուժական Կլինիկա**

آدرس: خیابان شریعتی، بالاتر از خیابان ملک،  
 روبروی سه راه زندان، نشانی کوچه زنبور،  
 پلاک ۵۲۸، واحد ۷ جنوبی

تلفن: ۸۸ ۴۴ ۱۲ ۴۹ }  
 ۸۸ ۴۵ ۲۴ ۵۸ }  
 فکس: ۸۸ ۴۴ ۱۲ ۴۶

**«ՆԱՐՄԱՔ»**  
**قالیشوئی نارمک**

Ընդունում ենք ամեն Տեսակի պատերներ,  
 գունապերծում, շրգանակում եւ նորոգումներ:  
**Մասնագետ լաւորակ գորգերի լացման մեջ**

**Tel : 77 89 57 29 - 77 89 27 31**  
**77 50 70 43 - 77 60 93 93**  
**77 45 40 33 - 77 89 54 24**  
**77 27 56 16 - 77 27 56 18**  
**44 11 43 19 - 22 88 35 10**  
**Mob : 0912 200 96 03**

**Ճաշարան 72**

*Ընդունելությունն սպասիով ու խաղաղ մթնոլորտում  
 Ընտիր ու որակով ճաշատեսակներով*



**Tel : 88747990-9 1**  
 Կիսիան Այաճաճա, Կիսիան Ունիքտ, Արճայ Կոյիշ Շէմ, Շարհ 72

թիվ 27

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1													■		
2								■							
3				■					■						
4					■					■					■
5		■						■			■				■
6					■							■			
7				■			■								■
8			■							■			■		
9				■					■						■
10					■			■		■					
11		■								■					
12					■						■				
13		■						■							
14	■						■			■					■
15				■						■		■			

### Հորիզոնական

- Ատրպատականի հայոց մեծ առաջնորդ: Ցուցական դերանուն:
- Անձնապատան անհատ: Արին հոսող վերք:
- Կաշի աման: Դեմքի մասին: Անուղղակի ասած խօսք:
- Մուսուլման ազգութիւն: Տարելից, տարեդարձ: Արար:
- Հանդարտ, նուրբ: Կրկնած բաղաձայն: Արական անուն:
- Մեր նախապապը: Իրօք, ճշմարիտ: Լատին Ամերիկայի մայրաքաղաքներից:
- Ճերմակի ու մաքրութեան խորհրդանիշը: Քանիերորդ:
- Կարողութիւն: Անբնակ տարածք: Աջից մակերեսի միաւոր: Ձայնանիշ:
- Ջրային տարածք: Հագուստի կտոր, պատուածք: Ուտնագնդակի միջազգային ֆեդերացիա:
- Սոված, քաղցած: Տեղանունների վերջածանց: Պաշտօնական հագուստ:
- Որեւէ աղէտի տարածում: Կեղծ, արհեստական, սարքովի:
- ժայռակտոր: Պահեցողութիւն: Երկինչին տառ: Շաղկապ է:

- Հնում գործածող հրազէն: Տեղեակ:
- Բարբառական՝ կախած: Հարցական դերանուն: Քարացած վիճակում աղ:
- Կոկորդ: Փոխաբերական իմաստով արտոբավայր, տաժանակիր աշխատանքի տեղ: Անձնական դերանուն:

### Ուղղահայեաց

- Առանց այս արդիւնաբերական կենտրոնի իւրաքանչիւր երկրի ճարտարարւեստը կը գտնուի կախեալ վիճակում:
- Գերի: Քանակական չափի միաւոր: Կրկնութիւնը՝ թռչնածայն:
- Շներին կերակրելու միջոց: Հին պատի ժամացոյցի մէջ մետաղէ ձող՝ ծայրին ծանրոց:
- Ցածից՝ 3.14 թիւ անունը: Թատերական հարթակ: Շարաւ, ժահր:
- Էգ շուն: Լայնարձակ, անսահման, անհուն: Խիղճ:
- Առանց որի չար գոյութեան ցաւօք սրտի հնարաւոր չէ պատկերացնել որեւէ երկիր կամ անհատ: Չհունցւած կաւ...: Շինանիւթ:
- Հիւլէ (ուղղգր.սխալով): Ամմիջապէս, արագ:
- Ինչ որ ընդգրկուում է աչքերի տեսողութեան սահմանում: Մարմնի զոյգ մասերից: Որտեղ:
- Վերջը ցնդած գազ... : Ազնական ծագումով հեծեալ զինուորական: Ստացական դերանուն: Գրաբար՝ այսինքն:
- Արինատար անօթ: Օժանդակ բայ: Ձայնանիշ: Առարկայ:
- Ուժից ընկած: Հին ազգութիւն Միջագետքում: Լոյս ժամանակ քայլում է մեզ հետ:
- Իգական անուն: Հայ մեծանուն վիպագիր: Անջատ:
- Որսի միջոցներից: Արինախում:
- Տեսակ(օտար): Յատկանիշ:
- Թմրանօթի գնդակ: Ծածկելու, թաքցնելու գործողութիւնը: Կրկնութիւնը՝ թռչնածայն:

## Անցեալ համարի պատասխանները

20

9	8	4	2	1	7	5	6	3
2	7	6	9	3	5	4	1	8
5	3	1	4	8	6	9	2	7
4	6	3	5	9	2	8	7	1
1	9	8	7	4	3	2	5	6
7	5	2	1	6	8	3	9	4
3	2	9	6	7	4	1	8	5
6	4	5	8	2	1	7	3	9
8	1	7	3	5	9	6	4	2

100

2	5	9	4	6	3	1	7	8
1	4	6	8	7	9	2	5	3
7	3	8	2	1	5	4	6	9
5	2	3	1	4	8	6	9	7
9	1	4	7	3	6	5	8	2
8	6	7	9	5	2	3	1	4
6	9	2	3	8	1	7	4	5
4	8	1	5	2	7	9	3	6
3	7	5	6	9	4	8	2	1

158


3	9	4	8	6	2	5	7	1
1	6	2	7	5	3	9	8	4
7	5	8	9	4	1	3	6	2
2	7	6	5	1	9	8	4	3
4	1	3	2	8	7	6	9	5
9	8	5	6	3	4	2	1	7
6	2	9	1	7	5	4	3	8
8	3	7	4	2	6	1	5	9
5	4	1	3	9	8	7	2	6




**شرکت خدمات مسافرت هوایی شعاع گشت**  
**SHO-AA GASHT Co.LTD.**  
 TRAVEL AGENCY  
**Տնօրէն՝ Արարս Բապխանեան**

- Ենթին և արտասահմանեան տուներ
- Օդու (արտասահմանեան բոլոր երկրներ)
- Օդու (Պարսկաստանի տեսարժան վայրեր)
- IN Coming Tour

تلفن : ۸۸۱۱۳۳۵ ، ۸۸۳۳۱۳۵-۷ ، ۸۸۳۱۱۷-۲-۳ ، ۸۸۳۱۱۶۳۹  
 E-mail : shoaa@sarnapardaz.com    ۲۲ شعبان شعاع شماره



- Լախազծում ու կառուցում խրհանդային ամենաարդիական սխառներ
- Գրառենալային ու բնալարանային դեկորացիա

09354710307  
 09366594871

**ARMENIA SIGHTSEEING**




**SATI TOURS**  
 in Armenia and Karabagh

21 Mashtots Ave., Yerevan, Armenia  
 Tel.: 53 11 20, 53 99 00

E-mail: sati@arminco.com  
 www.satiglobal.com

**«Յոյս»-ի ՍՈՍՅԻՆ ՏՄԻՆ ՄԷԼ ՀԱՏՈՐՈՎ**



Սահմանափակ քաղվ վաճառում է «Յոյս» երկարաբարբերի առաջին 24 համարների (2 Մայիս 2007-23 Ապրիլ 2008) հաւաքածուն՝ ընտիր կազմով:

**Art system**



**خدمات ماشینهای اداری**

**سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON**

تلفن: ۸۸۳۲۱۴۳۶-۷ و ۸۸۳۱۵۳۴۳-۴  
 فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه، شماره ۷۸، طبقه سوم، واحد ۵



**Arthur , Alen , Alex**

## ՅԱՐԳԵԼԻ ԾՆՈՂ

Ձեր բարի ուշադրությանն ենք յանձնում,  
Նոր դպրոցական տարեշրջանի համար 1388-89 Ալիշան տղայոց դպրոցը միաժամանակ պահպանելով դպրոցիս միս օղակները, նաեւ ունենալու է միջնակարգ առաջին տարին **اول متوسطه** , որը երկրորդ տարեշրջանից կը շարունակի **فنى - حرفه ای** մասնաճիւղերը:  
Երթելու թիրանի բոլոր թաղամասերից լինելու է անվճար:  
Բանակցութիւնները պետական պատասխանատուների հետ աւարտած եւ գրատր համաձայնութիւնը արդէն կնքած է:



Յաւելեալ տեղեկութիւնների համար կապել 66707204 առ.9 ից 13.ը  
Երկուշաբթի եւ չորեքշաբթի օրերը ժամը 8.30 - 11.30 զանգահարել 66701600

**Հայ Կաթողիկէ Առաջնորդարան  
Ալիշան Տղայոց Դպրոց**



## ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՃՆԵՐ

**Եթէ ցանկանում եք դառնալ պրոֆեսիոնալ ժուռնալիստ,**

մասնակցեք «Յոյս»-ի հրատարակման աշխատանքներին եւ ամառային անվճար դասընթացներին:

- Թերթը՝ մտայնացումից մինչեւ կրպակ
- Լրատուութեան հիմունքները
- Գրաֆիկա մամուլի համար
- Ծանօթութիւն լրագրութեան եւ մամուլի պատմութեան հետ
- Գործնական աշխատանք



Յաւելեալ տեղեկութիւնների համար կապելք հետեւեալ հեռախօսահամարներով՝

**6 6 4 9 5 1 8 0**

**6 6 4 9 2 6 9 3**